2025, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (688)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայտարարություն

Ամենայն Հայոց Հայրապետի՝ 2025 թ. հոկտեմբերի 21-ի տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգևների շնորհման և կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացության հիման վրա, Արագածոտնի թեմի հոգևոր սպասավոր Տ. Արամ քհն. Ասատրյանը, սպառած լինելով կանոնական դաշտ վերադառնալու իրեն ընձեռված ողջամիտ բոլոր հնարավորությունները՝ այդ թվում երիցս հրաժարվելով ներկայանալ հանձնախմբին, կարգալույծ հռչակվեց՝ կոչվելով ի դասն աշխարհականաց՝ Ստեփան Ասատրյան ավազանի անվամբ:

Ի հետևումն այս որոշման՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պատշաճ իրազեկմամբ Ստեփան Ասատրյանին, ըստ Եկեղեցու կանոնների, արգելել է կատարել եկեղեցական ծեսեր ու խորհրդակատարություններ, այլև այնպիսի գործողություններ, որոնք վերապահված են բացառապես Եկեղեցու սպասավորներին:

Ստեփան Ասատրյանից պահանջվել է նաև ս. թ. հոկտեմբերի 23-ին ազատել Հովհաննավանքը և Եկեղեցու բանալիները հանձնել Արագածոտնի թեմի վարչական խորհրդի ատենապետ Տ. Շնորհք աբեղա Պալոյանին, իսկ Մայր Աթոռի կողմից ծառայողական նպատակներով իրեն տրամադրված բնակարանն ազատել մինչև 2026 թ. հունվարի 15-ը:

Միաժամանակ Ստեփան Ասատրյանն իրազեկվել է, որ Հովհաննավանքում այսուհետ ծեսերն իրականացնելու են տեղում սպասավորող քահանաները, և հորդոր է հղվել ձեռնպահ մնալ ծեսերի՝ այդ թվում Սուրբ Պատարագի խորհրդի մատուցմանը որևէ կերպ խոչընդոտելուց, ինչը ոչ միայն կանոնական կոպտագույն խախտում է, այլև քրեորեն պատժելի արարք:

Նշենք, որ Ստեփան Ասատրյանը, անտեսելով Մայր Աթոռի օրինական պահանջները, հրաժարվում է հանձնել եկեղեցու բանալիները և ազատել Հովհաննավանքի տարածքը:

Ցավում ենք, որ Արամ քահանայի կարգազանց ընթացքի հետևանքով Մայր Աթոռի կողմից ձեռնարկված կարգապահական միջոցառումները և կայացված կարգալուծության որոշումը անհարկի շահարկում են իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչները: Դատապարտելի է հատկապես վարչապետի աջակցությամբ Հովհաննավանքում Ս. Պատարագի անվան ներքո միջոցառում կազմակերպելու՝ Ստեփան Ասատրյանի հոգեկործան նախաձեռնությունը: Սա իշխող քաղաքական ուժի ղեկավարի կողմից Եկեղեցին պառակտելու հերթական փորձ է՝ հակաօրինական ու հակաեկեղեցական իր բոլոր դրսևորումներով:

Եկեղեցիները, վանքերը և այլ սրբավայրեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ժառանգությունն են, և անկախ այդ պատմամշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքից՝ կրոնական ծեսեր կատարելու և պատարագներ մատուցելու կանոնական իրավունքը բացառապես վերապահված է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Կարևորությամբ ցանկանում ենք արձանագրել, որ նախկին եկեղեցականի կողմից ձեռնարկվող քայլերով խոչընդոտվում է Հովհաննավանքում սպասավորող քահանաների օրինավոր ծառայությունը, պղծվում է սրբավայրը՝ հակականոնական գործողություններին մեղսակից դարձնելով մերժելի ընթացքին մասնակից անձանց:

Հորդորում ենք իրավապահ մարմիններին՝ կանխել ապօրինությունները և ապահովել Հովհաննավանքում սպասավորող քահանաների բնականոն ծառայությունը և սրբավայրի հոգևոր-աղոթական մթնոլորտը:

24. 10. 2025 թ.

Կատարվեց քահանայական ձեռնադրություն

Հոկտեմբերի 26-ին՝ Գյուտ Խաչի տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Տոնի առիթով հավատացյալների երկրպագության համար դուրս բերվեց նաև Փրկչի Խաչափայտի մասունքը:

Պատարագիչն էր Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրության և օծման արժանացան եկեղեցական տարբեր կառույցներում սպասավորող վեց սարկավագներ:

Սուրբ Պատարագի ընթացքում Մակար Սրբազանը, քահանայության կոչելով նորընծաներին, Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաև նորաօծ եկեղեցականներին շնորհեց նոր հոգևոր անուններ:

Բարեշնորհ Տիգրան սարկավագ Հակոբյանը վերակոչվեց Տեր Ավետիս քահանա, Սիմոն սարկավագ Իգիթյանը՝ Տեր Դավիթ քահանա, Գրիգոր սարկավագ Ավոյանը՝ Տեր Գառնիկ քահանա, Արթուր սարկավագ Օհանյանը՝ Տեր Մեսրոպ քահանա, Հակոբ սարկավագ Գևորգյանը՝ Տեր Հովհան քահանա, և Հայկ սարկավագ Թովմասյանը՝ Տեր Նշան քահանա:

Այնուհետև նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Սրբազան Հայրը, իր քարոզում անդրադառնալով քահանայության խորհրդին, մասնավորապես ընդգծեց, որ յուրաքանչյուր ձեռնադրություն նոր ուժ, ոգևորություն ու սեր է փոխանցում ներկային և գալիքին, որովհետև նորաօծ քահանաները գալիս են զորացնելու հավատը, սերը, խոնարհությունը մեր ժողովրդի մեջ՝ դառնալով աջակից և զորակից իրենց ավագ եղբայրներին,

որոնք արդեն իսկ քայլում են խաչի օրհնյալ ճանապարհով:

«Սիրելի՛ քահանա հայրեր, մաղթանքս է, որ հավատարիմ մնաք ձեր տված երդմանը, որ սուրբ սեղանի առջև ուխտեցիք, թե պատրաստ եք կատարելու բոլոր հրամանները և սրբերի կանոններով քայլելու՝ առանց հակառակելու ձեր հոգևոր առաջնորդներին: Մաղթանքս է, որ քայլեք խաչի ճանապարհով, որը նեղ ճանապարհն է և տանում է հավիտենական կյանք, իսկ մյուսը, որը լայն է, տանում է դեպի կործանում: Դուք օրինակ վերցրեք մեր հայրերից, մեր շուրջ ապրող ու արարող եղբայրներից, որոնք վստահ հավատքով ընթանում են նեղ ճանապարհով՝ լցված Սուրբ Էջմիածնի հանդեպ անշեջ սիրով, և իրենց տոկունությամբ մեզ ուժ են փոխանցում՝ ասելով. «Եթե կցորդ ենք Տիրոջ չարչարանքներին, հաղորդակից կլինենք նաև նրա փառքին»» (Հռոմ. 8.17),– ասաց Մակար եպիսկոպոսը:

Վերջում պատարագիչ Սրբազանը հորդորեց նորաօծ եկեղեցականներին՝ իրենց ծառայությունը բերել մեր Եկեղեցուն սուրբ վարքով, ուղիղ հավատքով, լուսավոր մտքով, ժրաջան մշակի համբերությամբ, խոնարհությամբ ու հեզությամբ:

Ապա «Ողջույնի» ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորաօծ քահանաներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ ճակատներն ու ձեռքերը: Սուրբ Պատարագի՝ «Տէր, ողորմեա» երգեցողության ժամանակ հոգևորականներն ու ներկա հավատացյալներն առանձնական աղոթք բարձրացրին ապօրինաբար ազատազրկված Միքայել, Բագրատ արքեպիսկոպոսների, Մկրտիչ եպիսկոպոսի, Գարեգին քահանայի, ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանի և բոլոր գերյալների ազատության, ինչպես նաև հայրենի երկրի խաղաղ ու բարօր կյանքի համար:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ քահանաներին

Հոկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց քահանայական կոչմանն արժանացած նորաօծ վեց քահանաներին՝ ուղեկցությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանի:

Հանդիպմանը Մակար եպիսկոպոսն իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հովվապետին՝ քահանայական ձեռնադրություն կատարելու պատվին արժանացնելու համար: Սրբազանն ընդգծեց, որ նորաօծ քահանաներն իրենց նվիրյալ ծառայությամբ ու ազգանվեր գործերով նոր ավյուն կհաղորդեն մեր ժողովրդի հոգևոր կյանքին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց նորընծաներին քահանայական օծման և ձեռնադրության առիթով՝ բերելով նրանց իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները:

Նորին Սրբությունն անդրադարձավ քահանայական կոչմանը և հոգևոր սպասավորության կարևորությանը՝ արձանագրելով, որ մեծ պատիվ ու շնորհ է ծառայել Աստծուն, ազգին և Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդ եկեղեցականներին՝ իրենց ծառայության մեջ լինել նախանձախնդիր և հաստատակամ, մշտապես ունկնդիր հավատավոր հոտի կարիքներին: Հայոց Հովվապետը պատգամեց կյանքի փորձությունների ու դժվարությունների առջև չվհատվել, դրանք հաղթահարել հավատով ու հույսով՝ իրենց նկարագրով ու պահվածքով բարի օրինակ լինելով համայնքների համար: Հոգևոր առաքելության արդյունավորման ճանապարհին Նորին Սրբությունը թելադրեց առաջնորդվել անսակարկ սիրով, զոհողության ու հանձնառության ոգով:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց քահանա հայրերին և նրանց ընծայեց «Մաշտոց» ծիսարաններ:

Մայր Աթոռում տեղի ունեցավ Հովհաննես Չիլինգիրյանի անվան գրադարանի բացման և շքանշանի հանձնման արարողություն

Հոկտեմբերի 22-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Գևորգյան հոգևոր ճեմարանի Կոմիտասյան դահլիճում բացվեց բարեհիշատակ Հովհաննես Չիլինգիրյանի անվան գրադարանը, որի հաստատման նախաձեռնությունը կյանքի կոչվեց մեծանուն հայորդու դուստրերի՝ Շամիր Ավագյան-Չիլինգիրյանի և Անի Սրմաքեշ-Չիլինգիրյանի օժանդակությամբ ու ազնիվ ջանքերով: Գրադարանը պարունակում է Հովհաննես Չիլինգիրյանի հնատիպ գրքերի հավաքածուն:

Գրադարանի հանդիսավոր բացումն սկսվեց Տերունական աղոթքով: Այս առիթով Վեհափառ Հայրապետը տեր և տիկին՝ Հակոբ և Շամիր Ավագյաններին շնորհեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշան:

Մեծարյալների կյանքին և ազգօգուտ ու հայրենանվեր գործունեությանն անդրադարձավ տիար Ռուբեն Միրզախանյանը, ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական սրբատառ կոնդակը և շքանշանները:

Այնուհետև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանն ընթերցեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որում ի մասնավորի ասվում է.

«Մեծարգո՛ պարոն Հակոբ Ավագյան,

....Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնի հանդեպ սերը Ձեր հոգում՝ Դուք Ձեր սիրելի տիկնոջ՝ Շամիրի հետ միասին կարևոր օժանդակություն բերեցիք Մայր Աթոռի հովանու ներքո «Ռուբեն Սևակ» թանգարանի հաստատմանը, որտեղ ներկայացված են Հայոց ցեղասպանությանը զոհ դարձած մեծանուն հայորդու արխիվային նյութերն ու անձնական իրերը, ինչպես նաև բարեհիշատակ Հովհաննես Չիլինգիրյանի գեղանկարչական մեծարժեք հավաքածուն: Թանգարանը նոր հնարավորություն է ընձեռել Սուրբ Էջմիածնի այցելուներին ու ուխտավորներին՝ ծանոթանալու մեր ժողովրդի շնորհաշատ զավակների բարձրարվեստ ստեղծագործություններին ու հայ մշակույթի գանձերին:



Դուք գովարժան ներդրում ունեք Մայր Աթոռում Հովհաննես Չիլինգիրյանի անվան գրադարանի հիմնադրման գործում, որն ազնիվ փափագն ու ցանկությունն էր եկեղեցասեր հայորդու: Հայրենիք փոխադրված և Գևորգյան հոգևոր ճեմարանի Կոմիտասյան սրահում հանգրվանած հնատիպ հարուստ գրականությունը հասանելի պիտի լինի մեր հոգևորականներին ու ճեմարանի սաներին և ծառայի նրանց կրթության ու պատրաստության գործին:

Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ գործերի Ձեր անձնական մեծարժեք հավաքածուն Սուրբ Էջմիածնին ընծայաբերելու պատրաստակամության համար, որոնցից մի մասն արդեն իսկ փոխանցել եք Մայր Աթոռին: Ուրախ ենք մեծապես, որ Ձեր օժանդակությամբ Սուրբ Էջմիածինը պիտի օժտվի նաև հայկական գործերի թանգարանով՝ ի ցույց դնելով մեր ժողովրդի գործագործության հարուստ ավանդներն ու ժառանգությունը»:

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարերար զույգին հանձնեց Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանը՝ վերստին բերելով Հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Ընտանիքի անունից Նորին Սրբությանն իր երախտիքի ու սրտի խոսքը հղեց տիկին Շամիր Ավագյանը:

Միջոցառմանը երաժշտական կատարումներով հանդես եկան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտ-կատարողները:

Վերջում հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչ» աղոթքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռ ժամանած ուխտավորներին



Հոկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բաշխեց «Մեր ձևով» շարժման կողմից դեպի համայն հայության հոգևոր կենտրոն կազմակերպված ուխտագնացության հազարավոր մասնակիցներին:

Միածնաէջ Մայր Տաճարում Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց միասնական աղոթք, որից հետո Վեհափառ Հայրապետն իր պատգամը բերեց ներկա ուխտավոր ժողովրդին:

«Սիրելի՛ ուխտավոր զավակներ,

հայրապետական օրհնությամբ ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որտեղից սերնդեսերունդ հայոց կյանքին փոխանցվել են տերունաշնորհ հավատքը, հայրենանվիրումն ու ազգային ոգին:

Ձեր ուխտագնացությունը դեպի Սուրբ Էջմիածին վկայում է ձեր սիրո և անսակարկ նվիրվածության մասին հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին և ազգային արժեքները: Սուրբ Էջմիածնով է դարերի հոլովույթում միշտ

միասնական ու աննկուն մնացել մեր ժողովուրդը:

Այսօր մեր հայրենիքը կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև: Արտաքին ծանր սպառնալիքները զուգակցվում են ազգային արժեքների և ինքնության նվիրագործված ընկալումների խեղմամբ, ներքին պառակտվածությամբ, որն ավելի է խորանում անհանդուրժողության ու ատելության սերմանումով՝ առաջ բերելով նոր բաժանումներ:

Մեր սրտերը ծանրացած են՝ տեսնելով, թե ինչպես են քաղաքական որոշումով, կեղծ ու շինծու մեղադրանքներով ազատազրկվում նվիրյալ հայորդիներ, եկեղեցականներ Տ. Միքայել արք. Աջապահյանը, Տ. Բագրատ արք. Գալստանյանը, Տ. Մկրտիչ եպս. Պռոշյանը, Տ. Գարեգին քհն. Արսենյանը, ազգային մեծանուն բարերար Տիար Սամվել Կարապետյանը և այլ քաղաքացիական անձեր: Մեր սերը, մեր աղոթքները նրանց հետ են, և հավատում ենք, որ Աստծո օգնությամբ կարող կլինենք վերականգնել արդարությունը, որպեսզի ազատ արձակվեն ապօրինաբար բանտարկված մեր զավակները, մեր եղբայրներն ու քույրերը:

Սիրելինե՛ր, Մեր գնահատանքն ենք բերում ամենքիդ՝ հանդեպ մեր Սուրբ Եկեղեցին դրսևորած ձեր հավատարմության և այս խռովահույզ օրերին հոգևորականներին ցուցաբերած զորակցության համար: ➥ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռ ժամանած ուխտավորներին

➥ էջ 2

Հակառակ իշխող ուժի կողմից հակաեկեղեցական դատապարտելի գործողությունների՝ մեր Սուրբ Եկեղեցին անսասան է, հզոր՝ հավատավոր մեր ժողովրդով, և նույն նախանձախնդրությամբ շարունակելու է արդյունավորել տերունավանդ իր առաքելությունը՝ հետամուտ լինելով նաև մեր ազգի և հայրենիքի շահերի պաշտպանությանը:

Մեր կոչն է հավատավոր Մեր զավակներին՝ ամուր մնալ, չտկարանալ, չընկրկել մեզ բաժին ընկած դժվարությունների ու փորձությունների առջև, այլ առաջ ընթանալ առաքելապատվեր քաջությամբ, թե՝ «Աստված մեզ երկչոտության ոգի չտվեց, այլ զորության, սիրո և զգաստության» (Բ Տիմ. 1.7):

Միասնաբար, համատեղ ջանքերով ամրապնդենք հույսն ու հավատը մեր կյանքում, բարին ու խաղաղությունը մեր երկրում:

Համերաշխությամբ ու միաբանությամբ կարող պիտի լինենք իրագործելի դարձնել պետության հզորացման և հայրենիքի շինության մեր համընդհանուր տեսիլքները:

Աղոթում ենք, որ Ամենակալ Աստված Իր Սուրբ Աջով պահպանի մեր հայրենիքը, Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և զորացնի մեր ժողովրդին՝ աննկուն ոգով դիմագրավելու բոլոր մարտահրավերները: Թող Տերը ապահովություն ու բարօրություն պարգևի ազգիս հայոց ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Ձեր ուխտն ի կատար, սիրելիներ»:

Հայտարարություն

Եկեղեցու նկատմամբ ՀՀ իշխանությունների կողմից չընդհատվող հալածանքները վերջին օրերին արտահայտվեցին անօրինակ նոր դրսևորումներով: Արագածոտնի թեմի Հովհաննավանքում Սուրբ Պատարագի նվիրական անվան ներքո իրականացված սրբապիղծ բեմականացումից հետո, իրավապահների անմիջական մասնակցությամբ և խոչընդոտող խմբերի ներգրավմամբ, բռնազավթված է Հովհաննավանքը, որի հետևանքով խաթարվում է տեղում ծառայության նշանակված Տեր Սարգիս քհն. Սարգսյանի և Տեր Մանուկ քհն. Զեյնալյանի հոգևոր ծառայությունը: Միաժամանակ խոչընդոտող խմբերի կողմից սպառնալիքներ ու բռնության կոչեր են հնչում ծառայության նշանակված հոգևորականների նկատմամբ:

Հարկ ենք համարում արձանագրել, որ իշխանությունների հովանավորմամբ Հովհաննավանքում ծիսակատարությունների անվան տակ կատարվող գործողությունները պղծություն են, չունեն հոգևոր որևէ արժեք և անվավեր են, իսկ Հովհաննավանքի եկեղեցին ենթակա է վերասրբագործման:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հետամուտ է լինելու օրինական բոլոր ճանապարհներով Հովհաննավանքի նկատմամբ իր իրավունքների վերականգնմանը, խղճի ազատության դեմ ոտնձգությունների հետևանքների վերացմանը, հավատացյալների հոգևոր-կանոնական կյանքի պաշտպանությանը և եկեղեցականների բնականոն ծառայության ապահովմանը:

Աղոթում ենք, որ Ամենակալ Տերն ապահով ու անվտանգ պահի մեր երկիրը և անսասան մեր Սուրբ Եկեղեցին: Ամեն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
30.10.2025 թ.

Նոր Նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Ոսկան աբեղա Ոսկանյանը, ազատվելով Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում ստանձնած պարտականություններից, ուսումնառության է կոչվել Ֆինլանդիայում:

Հոգեշնորհ Տ. Վիրապ աբեղա Սարգսյանն ուսումնառության է կոչվել Աթենքի պետական համալսարանում՝ ազատվելով Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում ստանձնած պարտականություններից:

Արժանապատիվ Տ. Արամ քահանա Թիլիքյանը ծառայության է կոչվել Իսպանիայում՝ Արևմտյան Եվրոպայի Հայրապետական Պատվիրակի իշխանության ներքո:

Ի Տեր ննջեց Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը

Խոր ցավով հայտնում ենք, որ հոկտեմբերի 25-ին, կյանքի 74-րդ տարում, երկարատև հիվանդությունից վախճանվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը խորապես սգում են լուսահոգի Գիսակ Սրբազանի մահը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Կարգալույծ է հռչակվել Տ. Արամ քահանա Ասատրյանը

Հոկտեմբերի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Արամ քահանա Ասատրյանը:

Տնօրինության համար հիմք են ծառայել Արագածոտնի թեմի առաջնորդի զեկուցագիրը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգևների շնորհման և կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունն առ այն, որ Տ. Արամ քահանա Ասատրյանը՝

ա) Հրապարակային ելույթներով ու հայտարարություններով վարկաբեկել է Հայ Եկեղեցին, թեմական առաջնորդին և ծառայակից եկեղեցականներին,

բ) Անտեսելով թեմական առաջնորդի հորդորներն ու հրահանգները՝ հարատևել է կարգազանց ընթացքի մեջ,

գ) Վերջին մեկ ամսվա ընթացքում պատարագներին կամայականորեն զեղչել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի և թեմական առաջնորդի անունների հիշատակության հատվածը՝ այդ քայլով, ըստ էության, իրեն դուրս դնելով Եկեղեցուց,

դ) Երիցս համառել է ներկայանալ հանձնախմբի նիստերին՝ շրջանցելով վերջինիս հեղինակությունն ու իրավասությունները, ինչպես նաև իր անարգալից վարքագծով դրժել հնազանդության ուխտը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Ստեփան Ասատրյան ավազանի անունով:

Տոն Գյուտ Խաչի

«Անճառելի երևումն երևեալ դշխոյին, նստելով յատենի՝ Երուսաղէմ, խնդրէր զպատուական Փայտ Խաչին, յոր Զմեսիայն բևեռեցին: Մեծասաստ հրաման ժողովեալ հրէից, ցուցանելով նմա զպատուական Փայտ Խաչի, յոր ելեալ բարձրացաւ Արարիչն արարածոց: Ընդ յայտնիլ Սրբոյ Խաչին ի տեղւոջն սրբութեան, բուրմամբ անուշահոտ խնկոց և լցան տիեզերք մեծապէս պարգևօք»

(Շարակնոց):

Գյուտ Խաչի տոնը Խաչին նվիրված չորս տոներից վերջինն է և տոնվում է Խաչվերացից յոթ շաբաթ անց: Խաչելությունից հետո Տիրոջ խաչափայտի տեղի մասին Ավետարանները որևէ տեղեկություն չեն հաղորդում, սակայն բացը լրացվում է Սրբազան ավանդությամբ: Հիսուսի համբարձումից հետո Կենարար խաչափայտը գտնվում էր Գողգոթայում, քանի որ աշխարհի Փրկչին խաչեցին այդտեղ: Տիրոջ խաչը տարիներ շարունակ այդտեղ էր մնացել՝ լքված ու մոռացված:

Ավանդության համաձայն՝ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբոր օրոք՝ գարնանային մի օր, մանկական խաղի ժամանակ, մի կաղ երեխա պատահաբար դիպչում է Տիրոջ խաչափայտին և բժշկվում: Այս հրաշքի մասին լուրը տարածվում է ողջ Երուսաղեմում, և ամեն կողմից բժշկվելու մեծ փափագ ունեցողներ շտապում են հասնել Գողգոթա: Երուսաղեմ եկածները ևս բժշկվում են, ապա Տյառնեղբայրն իր խնամքի տակ է վերցնում երեք խաչափայտերը, սակայն հրեաները հափշտակում են դրանք:

Այս ընթացքում Հռոմի Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկեն, Հռոմում Պետրոս առաքյալի քարոզչությամբ քրիստոնյա է դառնում: Նա որոշում է իր զավակների հետ Երուսաղեմ ուխտի գնալ՝ շրջելու տերունական վայրերում և երկրպագելու: Այստեղ Պատրոնիկեն հանդիպում է Հակոբոս Տյառնեղբորը և շրջելով Սուրբ վայրերում՝ մտահոգվում է խաչափայտի ճակատագրով, քանի որ Տյառնեղբայրը ներկայացրել էր հրեաների բացահայտ թշնամանքն ու ատելությունը իրենց՝ քրիստոնյաների հանդեպ, ինչպես նաև վերջին իրադարձությունները: Թագուհին, տեղեկանալով այս ամենի մասին, վշտանում է և իր մոտ կանչում հրեա մեծամեծներին ու քահանաներին՝ պահանջելով Տիրոջ խաչափայտը: Ապա թագուհին իր շքախմբով գնում է այն վայրը, որտեղ գտնվում էին հրեաների թաքցրած երեք խաչափայտերը: Թագուհին, տեսնելով խաչափայտերը, մտածում էր, թե այդ երեքից որն է Տիրոջ խաչափայտը: Այդ ժամանակ նրա դուստրերից մեկը հանկածամահ է լինում, և թագուհին ծնկաչոք աղոթում է Տիրոջն իր մահացած դստեր համար: Մինչ թագուհին արտասվալից աղոթում էր, նրա որդիներից մեկն ասում է, որ սա աստվածային նախախնամություն է, որպեսզի սրանով հայտնի դառնա, թե այս երեք խաչափայտերից որն է Քրիստոսինը («Գանձասար» աստուածաբանական հանդես, հտ. Զ, Երևան, 1998, էջ 112–114):

Մեռած աղջկան հաջորդաբար դնում են երեք խաչափայտերի վրա. երբ դնում են աջակողմյան ավազակի խաչի վրա, ոչ մի օգուտ չի լինում, իսկ երբ ձախակողմյան ավազակի խաչի վրա են դնում, բացվում է աղջկա աջ աչքը: Հենց դնում են Տիրոջ խաչի վրա, աղջիկը կենդանանում է, և ներկաները, տեսնելով այս ամենը, խոնարհվում են ու երկրպագում Տիրոջ խաչափայտը: Թագուհին Տիրոջ խաչափայտը հանձնում է Հակոբոս Տյառնեղբորը և դրանով իսկ ավարտում Երուսաղեմում իր ուխտագնացությունը, ապա գոհունակ սրտով վերադառնում Հռոմ՝ իր հետ տանելով խաչափայտից մի մասունք:

Երբ վախճանվում է Կլավդիոս կայսրը, իշխանությունն անցնում է Ներոնին, որը սաստիկ հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ: Հրեաներն էլ, օգտվելով պատեհ առիթից, սպանում են Տյառնեղբորը և խաչափայտը թաղում Գողգոթայում՝ մի խոր փոսի մեջ՝ այն վերածելով աղբանոցի:

Շուրջ երեք հարյուր տարի Տիրոջ խաչափայտը մնում է լքված ու անհայտության մեջ, մինչև որ Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Սուրբ Հեղինեն, տեսիլքով Տիրոջից հրաման է առնում գնալ Երուսաղեմ, փնտրել ու գտնել խաչափայտը: Սուրբ Հեղինեն Երուսաղեմ է գալիս զորքով ու մեծ փառքով:

Այդ ժամանակ Երուսաղեմի եպիսկոպոսը Մակարիոսն էր: Գալով Երուսաղեմ՝ սրբուհին երկար փնտրտուքներից հետո պարզում է, որ Հուդա անունով մի հրեա գիտի խաչափայտի տեղը, բայց չի ցանկանում հայտնել: Թագուհին ճարահատյալ հրամայում է նրան բանտարկել և խոշտանգումների ենթարկել: Հուդան, վեց օր առանց հացի մնալով մի ցամաքած ջրհորի հատակում, վերջապես հարկադրաբար որոշում է հայտնել խաչափայտի վայրը, և թագուհին Գողգոթայում ձեռնարկում է խաչափայտի որոնումներին: Ի վերջո երեք խաչ է գտնվում, սակայն որևէ տարբերակիչ նշան չկար, որով կարողանային զանազանել, թե որն է Փրկչի խաչը: Այդ ժամանակ սգո թափոր էր անցնում նրանց մոտով, և տեսնելով նրանց՝ թագուհին հրամայում է մահացածին իրենց մոտ բերել: Ապա պատվիրում է մեռածին դնել երեք խաչերից յուրաքանչյուրի վրա, և երբ երրորդ խաչի վրա են դնում, նա կենդանանում է: Դրանով հայտնի է դառնում, որ այն հենց Հիսուս Քրիստոսի խաչափայտն է: Եվ Երուսաղեմի Կյուրեղ հայրապետը Տիրոջ խաչափայտը բարձրացնում է՝ ի տես հավատացյալների: Սուրբ Հեղինեն, բացի խաչափայտը գտնելուց, Տիրոջ գերեզմանի վրա կառուցել է տալիս Սուրբ Հարության տաճարը, ապա վերադառնում Հռոմ (Թորգոմ պատրիարք, Սուրբք և տօնք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1939, էջ 315):

Խաչափայտը գտնելուց հետո սրբուհին հրամայում է այն պատել ոսկով ու պատվական քարերով: Խաչափայտի գտնվելու վայրն իմացող Հուդան, տեսնելով հրաշքը, մկրտվում է, վերանվանվում Կյուրեղ, որից հետո քահանա է ձեռնադրվում, որոշ ժամանակ անց էլ դառնում Պաղեստինի վիճակներից մեկի եպիսկոպոսը:

Առաջին հայացքից կարող են ասել՝ խաչը, մահապատժի սոսկալի գործիք լինելով, ինչպե՞ս կարող է քրիստոնյաների համար լինել հավատի նշան, իսկ Գողգոթա՝ ուխտավայր, որ անգամ Սուրբ Հեղինեն աշխարհի մայրաքաղաք Հռոմից եկավ ուխտի Սուրբ Երկիր՝ գտնելու խաչափայտը: ➥ էջ 7

Հիսուս Քրիստոսի կերպարի առանձնահատկությունները՝ ըստ չորս ավետարանիչների

Ներածություն

Նոր Կտակարանի կանոնում առկա է չորս Ավետարան՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի հեղինակությամբ, որոնք ներկայացնում են Հիսուս Քրիստոսի կյանքի, հրաշքների, վարդապետության, մահվան, հարության և համբարձման պատմությունը: Չնայած ընդհանուր թեմային՝ յուրաքանչյուր Ավետարան առանձնանում է հեղինակային յուրահատկություններով, մշակութային և պատմական միջավայրով, ոճով ու լեզվով, Հիսուսի կերպարի ներկայացման ինքնատիպությամբ:

Մատթեոս ավետարանիչ

Մատթեոսի Ավետարանը հատկանշվում է նրանով, որ այն հստակորեն կապում է Հին և Նոր Կտակարանները՝ ցույց տալով, թե ինչպես են Հին Կտակարանի մարգարեությունները իրագործվում Քրիստոսի անձով և գործերով: Հեղինակը բազմիցս օգտագործում է հինկտակարանյան մեջբերումներ՝ հաստատելու, որ Հիսուսն է սպասված Մեսիան:

Մատթեոսի կերպարն ուրվագծվում է որպես իրավաբանական և հրեական ավանդույթներին հարազատ ու քաջածանոթ հեղինակ: Առհասարակ, հրեա ազգը՝ մանավանդ առաջին դարում ապրող հրեաների մեծ մասը, անգիր, իսկ մյուսներն էլ նախնիներից ստացած տպավորության մակարդակով տիրապետում էին ամբողջ Սուրբ Գրքի բովանդակությանը՝ մարգարեություններին, պատմական գրքերին և սաղմոսներին ու առակներին, որ ամենից գործածելին էին: Այս ամենը խորը գիտակցելով և լինելով Սուրբ Գրքին բնագրային մակարդակով քաջատեղյակ անձ՝ իր Ավետարանը Մատթեոսն ուղղել է մեծ մասամբ հրեա ժողովրդին՝ քրիստոնյա դարձնելու և Փրկությունը քարոզելու նպատակադրումով: Այս մասին չի վկայում ոչ ինքը՝ Մատթեոսը, և ոչ էլ՝ այլ հեղինակ, սակայն Ավետարանի ոճը, պատկերային համակարգը, հինկտակարանյան վկայությունները և կարևոր այլ հայեցակետեր ենթադրում են դա: Եթե մյուս ավետարանիչները ծավալուն, հանգամանալից և բացատրական ոճով էին գրի առնում, ապա Մատթեոս ավետարանիչը միայն ամփոփ նկարագրում է դրվագը, քանի որ ընթերցող հասցեատերերը, որ հրեաներ էին, հստակ գիտեին և՛ իրենց ազգային ավանդույթները, և՛ մեջբերված հինկտակարանյան հատվածները: Քանի որ Մատթեոսի Ավետարանը նախատեսված է հրեա ընթերցողների համար, և հասցեատերը հրեա հանրությունն է, հեղինակը հաճախ ընդգծում է Հիսուսի կողմից սաղմոսների և մարգարեությունների իրագործումը: Օրինակ՝ երբ ավետարանիչը նկարագրում է Հովսեփին տրված հայտնությունը, թե Մարիամը Սուրբ Հոգուց է հղացած և Որդի պիտի ծնի, ու նրա անունը Հիսուս պետք է դնեն, շարունակելով՝ շեշտում է. «Այս ամենը եղավ, որպեսզի իրականանար Տիրոջ կողմից մարգարեի միջոցով ասվածը» (Մատթ. Ա 22) — «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և նրան կկոչեն Էմմանուել» (Ես. է 14): Երբ Հերովդեսը հրամայում է սպանել մանկանց, հեղինակը հիշեցնում է Երեմիա մարգարեի խոսքերը. «Ռամայում լաց լսվեց, ողբ ու սաստիկ լացուկոծ. Ռաքելը լալիս էր իր զավակների վրա ու չէր ուզում մխիթարվել, որովհետև նրանք չկային» (Մատթ. Բ 18) — «Ռամայում մի ձայն լսվեց, դառնագին ողբ, լաց. Ռաքելն իր տղաների համար է լալիս, մերժում է մխիթարվել իր որդիների համար, որոնք չկան» (Երեմ. ԼԱ 15): Նույնպես՝ երբ Հիսուսը գնում է Նազարեթ, Մատթեոսը հավելում է. «Որպեսզի կատարվի այն, ինչ ասվել էր մարգարեների միջոցով՝ Նազովրեցի կկոչվի» (Մատթ. Բ 23): Մեկ այլ դրվագում ավետարանիչն առաջին դեմքով գրի է առնում Քրիստոսի խոսքը, որտեղ անուղղակի կերպով անդրադառնում է ողջ Հին Կտակարանին. «Մի՛ կարծեք, թե ես եկա օրենքը կամ մարգարեներին ջնջելու. ես չեկա ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ. Ե 17): Մատթեոսը ներկայացնում է Հիսուսին՝ որպես միակ



Հիսուս Քրիստոսի պատկերը՝ Հենրիխ Հոֆմանի «Քրիստոսը և հարուստ երիտասարդ իշխանը» կտավից, 1889 թ.

Աստծո խոստման, մարգարեների կողմից Մեսիայի գալուստի ազդարարման կատարյալ լրումի՝ դրանով իսկ ամփոփելով ամեն օրենք և մարգարեություն հենց Քրիստոսով: Ամբողջ Ավետարանում Մատթեոսը շարունակական կամուրջ է կառուցում՝ հնից դեպի նորը՝ ընդգծելով, որ Քրիստոսը ոչ թե նոր օրենք է բերել, այլ կատարել է Տիրոջ խոստումները:

Մարկոս ավետարանիչ

Մարկոսը՝ Պետրոսի աշակերտը, իր Ավետարանը գրել է որպես հակիրճ, գործնական, կենտրոնացված պատմություն: Նրա Ավետարանը, ի տարբերություն մյուսների, առավելաբար ընդգծում է Հիսուսի կատարյալ մարդեղությունը, ուժը և ծառայությունը, ինչպես նաև Նրա հրաշագործությունները: Հայտնի մի դրվագում ավետարանիչը հստակ ցույց է տալիս Քրիստոսի՝ այս պարագայում կատարյալ մարդեղության գթությունն ու դրանից բխող անթերի աստվածային արձագանքը. «Հիսուսի մոտ մի բորոտ եկավ. ծնկի իջած աղաչում էր և ասում. «Եթե ուզես, կարող ես ինձ մաքրել»: Հիսուսը գթալով ձեռքը մեկնեց, նրան դիպավ ու ասաց. «Ուզում եմ, մաքրվի՛ր»: Երբ ասաց նրան, բորոտությունն իսկույն վերացավ նրա վրայից, և նա մաքրվեց» (Մարկ. Ա 40–42): Մարկոսն իր Ավետարանում Հիսուս Քրիստոսին ներկայացնում է անմիջապես գործող, կարեկցող, բայց նաև ուժեղ և իշխանավոր. ոչ թե իշխանություն ստացող, այլ իշխանություն բաշխող: Այս Ավետարանի ոճն առանձնանում է նրանով, որ հեղինակը, ընդգծելով Հիսուս Քրիստոսի մարդկային կողմը, ցույց է տալիս ոչ միայն Նրա՝ Աստծո Որդի լինելը, այլև կատարյալ մարդեղությունը, թե ինչպես է ապրում, տառապում, զայրանում՝ յուրաքանչյուր մարդու նման: Եթե Մատթեոսն ու Ղուկասը իրենց Ավետարաններն սկսում են ծնունդի պատմությամբ, ապա Մարկոսն անմիջապես անցնում է Նրա գործերին՝ բացելով Ավետարանը հետևյալ խոսքերով. «Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդու Ավետարանի սկիզբը» (Մարկ. Ա 1): Հենց այդ Որդին է, որ ներկայացվում է որպես անձ, Որ զգում է մարդկային կարեկցանք. «...գթաց նրանց, որովհետև հովիվ չունեցող ոչխարների էին նման» (Մարկ. Զ 34): Մարկոսի Ավետարանում Հիսուսի երկրային կերպարը հաճախ արտահայտում է խոր զգացմունքներ: Գեթսեմանիի պարտեզում Նրա մարդկային տառապանքը հասնում է գագաթնակետին. «Հոգիս մահու չափ տրտմած է» (Մարկ. ԺԴ 34): Սա այն պահն է, երբ Քրիստոսը լիովին ապրում է մարդկային ցավը և միակ փրկությունը համարում աղոթքը. «Աբբա՛, Հա՛յր, քեզ համար ամեն ինչ հնարավոր է. այս բաժակն ինձանից հեռացրո՛ւ, բայց թող չլինի, ինչպես որ ես եմ կամենում, այլ ինչպես որ դու» (Մարկ. ԺԴ 36): Այս կերպ Մարկոսը ներկայացնում է Հիսուսին ոչ թե աստվածային վերացական կերպարանքով, այլ կենդանի մարդու՝ մարմնավորված Աստծո տեսքով: Ավետարանչի նկարագրությամբ՝ Հիսուս քայլում է փոշոտ ճանապարհներով, քաղցում, տխրում, զայրանում և լացում՝ այսպիսով բացահայտելով այն մեծ խորհուրդը, որ Աստված իրականում մտել է մարդկային փորձառության մեջ: Մարկոսի Ավետարանը ցույց է տալիս, որ Քրիստոսի զորությունը չի նվազում Նրա մարդեղությամբ, այլ հակառակը՝ Նրա մարդկայնության միջով է դրսևորվում աստվածությունը. հենց այս պատճառով հռոմեական հազարապետը խաչի տակ վկայում է. «Այս մարդն իսկապես Աստծո Որդին էր» (Մարկ. ԺԵ 39բ):

Ղուկաս ավետարանիչ

Ղուկաս ավետարանիչը, որ հայտնի էր որպես բժիշկ և Պողոսի ուղեկից, իր Ավետարանում առանձնահատկություն է տալիս Հիսուսի մարդասիրությանը և սոցիալական արդարությանը. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև ինձ օծեց և ինձ ուղարկեց աղքատներին բարի լուրը ավետելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատություն քարոզելու և կույրերին՝ տեսողություն, հարստահարվածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելի տարին քարոզելու» (Ղուկ. Դ 18–19, հմմտ. Ես. ԿԱ 1–2): Ավետարանիչը Քրիստոսի մարդասիրությունը լավագույնս ներկայացրել է հենց Քրիստոսի պատմած «Անառակ որդու առակի» (ԺԵ 11–32) հոր կերպարով, սակայն այդ ամենի յուրովի ներկայացմամբ ավետարանիչը կարողացել է ձեռք բերել մի յուրահատկություն, ըստ որի՝ Քրիստոսի մարդասիրությունը ոչ միայն հրեա հասարակության համար է և հասկանալի նրանց, այլև առավելաբար համամարդկային է և համայն մարդկության համար: Նրա Ավետարանը մանրամասն պատմում է հրաշագործություններ, աղոթքներ և առակներ՝ ցույց տալով Հիսուսի հոգևոր խորությունը և մարդկային կարեկցանքը: Ղուկասի Ավետարանն առանձնանում է խոր մարդկայնությամբ, պատմական ճշգրտությամբ և համընդհանուր տեսլականով: Ավետարանիչը Հիսուս Քրիստոսին ներկայացնում է որպես մարդկության փրկչի, ոչ միայն Իսրայելի ժողովրդի, այլև բոլոր ազգերի, հասարակության բոլոր շերտերի և հատկապես մերժվածների ու կարիքավորների Մեսիայի: Ղուկասը բժիշկ էր. «Ողջունում են ձեզ Ղուկասը՝ սիրելի բժիշկը, և Դեմասը» (Կող. Դ 14), և դա զգացվում է նրա գրության հոգեբանական նուրբ դիտարկումներում, կարեկցական վերաբերմունքում, մարդկային ցավի խոր ըմբռնման մեջ: Ավետարանն սկսվում է ոչ թե Քրիստոսի աստվածային փառահեղ նկարագրությամբ, այլ համեստ պատմությամբ մի մոր մասին, որ խոտով լի գոմում «ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց, դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանատանը նրանց համար տեղ չկար» (Ղուկ. Բ 7): Այս տեսարանը խորհրդանշում է այն, ինչ Ղուկասը ցանկանում է փոխանցել ամբողջ Ավետարանում. Աստված իջնում է մարդկանց ամենաստորին, ամենահասարակ միջավայր, որպեսզի փրկի բոլորին: Ղուկասի Ավետարանում Հիսուս խոր կարեկցանք է ցուցաբերում մարդկանց ցավի նկատմամբ. «Եվ Նա, Իր ձեռքը մեկնելով, դիպավ նրան ու ասաց. «Կամենում եմ, մաքրվի՛ր»: Եվ բորոտությունն իսկույն նրա վրայից անցավ» (Ղուկ. Ե 13), հուզվում է նրանց վշտով և մեծագույն հրաշք գործում. «Տերը, նրան տեսնելով, գթաց ու ասաց. «Մի՛ լար»: Եվ մոտենալով դիպավ դագաղին. դագաղը տանողները կանգնեցին: Եվ ասաց. «Պատանի՛, քեզ եմ ասում, վե՛ր կաց»: Մեռելը վեր կացավ, նստեց ու սկսեց խոսել: Եվ Հիսուսը նրան իր մորը տվեց» (Ղուկ. Է 13–15), թողություն տվեց մեղավորներին, որոնք զղջում են. «Եվ այդ կնոջն ասաց. «Քո մեղքերը ներված են քեզ»» (Ղուկ. Է 48): Այս դրվագներում Քրիստոս ոչ միայն բժշկում է մարմնական հիվանդությունները, այլև վերականգնում մարդկային արժանապատվությունը: Ղուկասը նաև միակն է, որ ընդգծում է կանանց դերակատարությունը և նրանց հավատը՝ հիշելով Մարիամին, Եղիսաբեթին, Աննա մարգարեուհուն, Մարթային ու Մարիամին: Միաժամանակ նա Քրիստոսի անձով ցույց է տալիս, որ աստվածային փրկությունը հասանելի է բոլորին՝ առանց սոցիալական, սեռական կամ ազգային տարբերությունների: Ուստի, Ղուկասի Ավետարանը Հիսուսին ներկայացնում է որպես գթասիրտ Բժշկի և կարեկից Փրկչի, Որ եկել է փրկելու «կորածներին». «...որովհետև Մարդու Որդին եկել է կորածին փնտրելու ու փրկելու» (Ղուկ. ԺԹ 10): Նրա Ավետարանում աստվածային մեծությունը դրսևորվում է խոնարհությամբ, իսկ փրկությունը՝ սիրո և թողության միջոցով: Ավետարանչի յուրահատկություններից է՝ հյուսել մի պատմություն, որտեղ երկնքի փառքը համադրվում է մարդկային ցավի հետ՝ ցույց տալով, որ Աստված ոչ թե հեռացել է մարդուց, այլ իջել է՝ մարդ դառնալու, որ մարդը դառնա աստվածանման:

Հովհաննես ավետարանիչ

Հովհաննեսի Ավետարանն իր բովանդակությամբ ու ոճով արմատապես տարբերվում է մյուս երեք Ավետարաններից: Եթե Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը (այսպես կոչված՝ համատես Ավետարանները) բնագրային բովանդակությամբ յուրովի ներկայացնում են Հիսուսի երկրային կյանքը, իսկ աստվածայինը տեղ-տեղ թողնում ենթատեքստում և ընթերցողի վերլուծական մտքին ապավինելուն, ապա Հովհաննեսը նպատակ ունի բացահայտելու Նրա հենց աստվածային էությունը: Հովհաննեսն սկսում է ոչ թե ծննդյան կամ մկրտության պատմությունից, այլ նախասահմանական գաղտնիքով՝ խոսքով, որը գոյություն ուներ դեռևս աշխարհի ստեղծումից առաջ. «Սկզբում էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր, և Բանը Աստված էր» (Հովհ. Ա 1): Այստեղ «Բան» (հուն.՝ Logos) նշանակում է աստվածային Խոսք, Նյութ, Սկիզբ, որի միջոցով ստեղծվեց ամեն ինչ: Եվ Հովհաննեսն այդ նույն Բանը նույնացնում է Հիսուս Քրիստոսի հետ՝ ընդգծելով մարդեղության խորհուրդը. «Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և մենք տեսանք նրա փառքը՝ ինչպես Հոր Միածնի փառքը» (Հովհ. Ա 14): Հովհաննեսի նկարագրած Քրիստոս նախևառաջ աստվածային հայտնություն է, Նա ոչ թե պարզապես մարգարե կամ բարոյախոս է, այլ Ինքն է արդարության, ճշմարտության և կյանքի աղբյուրը: Հովհաննեսի Ավետարանում Հիսուս բազմիցս օգտագործում է «Ես եմ» արտահայտությունը՝ նույնացնելով Իրեն Աստծո անվանը, որը հայտնվել էր Մովսեսին՝ ասելով. «Ես եմ, որ է» (Ելք Գ 14): Այդ օրինակ հատվածներից են՝

«Ես եմ կյանքի հացը» (Հովհ. Զ 35),
«Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. Ը 12),
«Ես եմ բարի հովիվը» (Հովհ. Ժ 11),
«Ես եմ հարությունը և կյանքը» (Հովհ. ԺԱ 25),

➥ էջ 5

Տառապանքից դեպի սրբագործում

Հարցազրույց բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի հետ

— Պարո՛ն Մանուկյան, 44-օրյա պատերազմում ունեցանք անդառնալի կորուստներ, և նրանց մեջ՝ Ձեր որդին՝ Վաչագան Մանուկյանը... Կորուստն ու տառապանքը փոխեցի՞ն սիրո, կյանքի և մահվան՝ Ձեր ընկալումները: Ձեր որդին Ձեզ ինչպե՞ս է միավորում հայրենիքի, Աստծո և հավերժության գաղափարների հետ:

— Իմ կյանքի ընթացքը իր հետ եմ շարունակում: Դժվար է, երբ քեզանից ուժեղին ես կորցնում, դժվար է նաև, երբ այդ կորստի և կորուստների պատճառ դարձած կառավարիչները շարունակում են անպատիժ զվարճանալ՝ մեր զավակների արյունը գավերով մատուցելով մեզ, և, ինչպես գիտեք, կան նաև այնպիսիները, որոնք, պարզված գավերն ընդունելով, պատրաստ են ծախել այդ սրբացած արյունը:

Վաչագանը երկինքի և երկրի սահմաններն առավել մոտեցրեց իրար, փոխեց ժամանակի ընթացքը, սիրո ընկալումները, անմահության խորհուրդն ու նշանակությունը... Հիմա իր մտքերին, ապրումներին, գաղափարներին հաղորդվելով՝ ինձ զգում եմ առավել մաքրագործված, քրիստոնեական արժեքներին խորությամբ առնչվող և իր իսկ պատգամով փորձում եմ ԿԱՐՈՏԻ ԹԱԽԻԾԸ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՉՇՓՈԹԵԼ: Ինչպես գեներալ Ավետիսյանն ասաց Եռաբլուրում, Վաչագանը հասել է այնպիսի սահմանների, որոնց շատ քչերին է հաջողվում մոտենալ...

— Ձեր պոեզիայում տառապանքն ունի մարմին, ձայն, կերպար: Դեռ հնագույն ժամանակներից հայտնի է, որ արվեստը նպաստում է անհատի ֆիզիկական և հոգևոր ապաքինմանն ու ինքնազատագրմանը: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս է արվեստն օգնում մարդուն վերապրել և սրբագործել ցավը:

— Ծնողներն ու ուսուցիչներն ուղղորդողներ են: Որպես անհատ՝ առավելապես ձևավորվել եմ իմ կարդացած գրքերով: Որոշ հեղինակներ՝ թե՛ հայ, թե՛ օտարազգի, մինչև հիմա ինձ հետ քայլում են ժամանակի միջով: Արվեստն օգնում է ազատվել ոգեղենությունը սանձող կապանքներից և նախքան մարմնաթող լինելը՝ զգալ վերերկրային ճախրանքը բացարձակ ազատության: Ճշմարիտ արվեստն Աստծուն մերձեցնող ճանապարհն է: Երբ բարձրից,

շատ ավելի բարձրից, քան աստղադիտարաններն են հնարավորություն տալիս, դիտում ես մարդկային քո կերպը, չքանում են թե՛ ինքնությունդ, թե՛ ցավդ, թե՛ մեծ ու փոքր բոլոր երազանքներդ, որոնք կյանքին ագուցող ամրակներ են: Հիմա մոտենում եմ այն տեղին, որտեղ բացակայում են անձնական հարաբերությունները, և մեծարենցյան աղոթքը՝ «Տո՛ւր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական», տիրական է դառնում...

— Ինչ է տառապանքը Ձեր դիտարկմամբ, և կարո՞ղ է այն անձին մղել հոգևոր աճի, անանձնականության ու սրբագործման: Եվ առանց տառապանքի՝ հնարավո՞ր է արդյոք հասնել հոգևոր սրբագործման:

— Մարդկային տարբեր ապրումներ կարող են խթան դառնալ՝ առօրյա երևույթներից դուրս գոյություն ունեցող, շատերին անհաղորդ, տարածք ու ժամանակ շրջանցող սահմաններին հաղորդվելու, և դա միայն տառապանքով չէ պայմանավորված: Տերյանն ասում էր. «Սիրտդ թող միշտ խնդա կամ լա — մահ է մթին, երբ լուռ է նա...»:

— Տառապանքը կարո՞ղ է բացահայտել մարդու էությունը, որ խաղաղության և ուրախության մեջ կարող էր անտեսված մնալ:

— Վերջնահաշվով՝ կյանքը ողբերգություն է: Ցնծության անցողիկ պահերը լիցքաթափման հանգրվաններ են նոր փորձություններից առաջ: Միայն տառապանքը չէ, որ ինքնաճանաչման է մղում: Եթե հոգուդ հայելու մեջ նայելու կարողություն ունես, ապա տեսանելի է քեզ պարգևված աստվածայինը:

— Ինչպե՞ս է տառապանքի ընկալումը փոխվում, երբ այն դիտարկում ենք Քրիստոսի խաչելության գաղափարի ներքո:

— Մի առիթով ասել եմ՝ Աստված Իր Որդուն չխնայեց, մեզ ինչո՞ւ պիտի խնայի: Մինչև հիմա Քրիստոսի արյունը թափվում է մոլորակի վրա՝ Վաչագանի և իր նման՝ լույսի ու բարության հաղթանակի մղվող սրբացած հոգիներից... Բայց մենք անհաղորդ ենք մնում, մենք շարունակում ենք Կայենի եղբայրասպան ընթացքը: Մենք կուրանում ենք ապրեցնող լույսից և խավարի մեջ թաքնվելով՝ փորձում ենք խաղաղության խաբկանքը հորինել: Պլատոնովի փոքրիկ հերոսը, թափառումներից հոգնած, գիշերը ուզում է քնել, բայց սրտի թակոցները թույլ չեն տալիս, և փոքրիկը սպասում է՝ սիրտը կանգ առնի, որ հանգիստ քնի...

— Ձեզ համար կա՞մ կերպար կամ խորհրդանիշ, որ մարմնավորում է սրբագործված տառապանքը:

— Հիմա այդ կերպարը Վաչագանն է, որ անվարան ելավ մարտի՝ իր ազգի, իր երկրի փրկության համար: Հիմա փորձում եմ վերապրել մեր ապրած օրերը՝ իր մանկությունից մինչև վերջին օրը, և խլված շարունակությունն էլ փորձում եմ երևակել...

— Ինչ խորհուրդ կտաք այն մարդկանց, որոնք հոգևոր ճգնաժամի մեջ են և չեն կարողանում վերահմաստավորել իրենց կյանքը:

— Խորհուրդ կտամ՝ չվախենան կյանքից, բացահայտեն աստվածապարգև հոգու գանձարանի հնարավոր բոլոր ծալքերը, որտեղ մարդուն մարդ պահող ամեն ինչ կա տարբեր իրավիճակների համար:

— Որպես բանաստեղծ և իր կյանքը հայրենիքին նվիրաբերած հերոսի հայր՝ ի՞նչ պատգամ ունեք մեր ժողովրդին:

— Ուզում եմ, որ մեր ժողովուրդն օր առաջ դուրս գա այս թմբիրից: Ուզում եմ, որ ինքնաճանաչման մղվելով, սեփական ուժն ու կարողությունը վերագտնելով՝ վերջապես ազատագրվի չարիքի ճիրաններից և ամուր հավատով ու կամքով շարունակի իր հավերժական ուղին:

Հարցազրույցը՝ Անի ՆԱԶԱՐՅԱՆԻ

Խաչիկ Մանուկյան. Պոեզիա

* * *

Տղամարդու չեղած դառը արցունքներով,
Որ մրմուռ են դառնամ, այրում կոկորդն ի վար,
Անթիվ կորուստներից իմ պաշարված սիրով
Ուզում եմ քեզ հիմա ամուր գրկել ու լալ:
Սովից ընդարմացած, հիվանդ հայացքներից,
Որոնք չեն ընկալում տեսանելի ոչինչ,
Կսարսափեր անգամ այն Հոբ Երանելին՝
Ուրանալով և՛ Տեր, և՛ փառք, և՛ ամեն ինչ:
Ահա, այդ խելագար հայացքների առաջ,
Որ սրերի նման փորոտիք են թափում,
Արնոտում են բառերն իմ շուրթերը սառած,
Որպես մահվան նվագ ցնդող հայրենիքում:

* * *

Ողջ կյանքս՝ պանդոկին նվեր,
Եվ հոգիս՝ արյունոտ բագին,
Ճախրանքի կարոտ իմ թևեր,
Մոխրացեք գինու կրակին:
Դիվահար եղավ ու ցնդեց
Էն սիրո զմայլանքն անգին,
Երկնքի միակ փառքը մեծ
Տեր չեղավ անշառ իմ վարքին:
Էլ չունեմ հայրենիք անմեռ,
Ինքնիշխան, զորավոր, կարգին,
Ողջ կյանքս՝ պանդոկին նվեր,
Եվ հոգիս՝ արյունոտ բագին....

* * *

Դուք գնացիք, տղերք, Հայրենիքը մնաց,
Որբ կարոտն է վազում ձեր թաղերում,
Հիշողություններ են փլվում ուշագնաց,
Տանիքները ճեղքող անձրևներ են մաղում:
Չէր գոցվելու ոչինչ ձեր մեծ սիրո դիմաց,
Խորքում՝ անմահության շունչը վերին...
Դուք գնացիք, տղերք, Հայրենիքը մնաց,
Ինչ բալասան տանենք ձեր մայրերին...

* * *

Ես քարեր եմ հանում հիմա երկինք,
Բառ քարեր եմ հանում, ոգի քարեր,
Տաճարդ եմ կերտում լուսակնիք
Աստծո պարտեզին մոտ՝ ամպերից վեր:

Անանձնական սիրո լապտերներդ
Ամրացնում եմ ձգվող ուղիներով,
Լամպարներից ինձ ժպտում է Տերը՝
Քո աչքերով, Քո հայացքով ներող:

Ես հուշեր եմ հանում հիմա երկինք՝
Արցունքների փայլով ու շողերով,
Որ ոգելով այնտեղ՝ գրկեմ կրկին
Աստվածային լույսը Քեզ արարող:

Հիսուս Քրիստոսի կերպարի առանձնահատկությունները՝ ըստ չորս ավետարանիչների

⬅ էջ 4

«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Այս արտահայտություններով Հովհաննեսը բացահայտում է Քրիստոսի ներսից բխող աստվածությունը, որը մյուս Ավետարաններում ներկայացված է հիմնականում Նրա գործերի միջոցով: Հովհաննեսի Ավետարանում Հիսուսը նաև առավել մտերմիկ է. Իր աշակերտների հետ խոսում է սիրո, հավատի և միության մասին: Վերջին ընթրիքի ժամանակ Նա ասում է. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես Ես սիրեցի ձեզ» (Հովհ. ԺԳ 34): Այստեղ Քրիստոսի աստվածությունը դառնում է սիրո միջոցով դրսևորված իրականություն, և հենց այդ սերն է, որ մարդուն դարձնում է աստվածային կյանքի մասնակից: Ավետարանիչ Հովհաննեսի յուրահատկությունն այն է, որ նա չի կենտրոնանում միայն պատմական փաստերի վրա, այլ խորապես թերապևտիկ և մետաֆիզիկական տեսանկյունից է բացահայտում Հիսուսին՝ որպես մարմնացած Բանի, Որը եկել է «....լույս տալու մարդկանց» (Հովհ. Ա 9): Նրա Ավետարանում Քրիստոս ոչ թե պարզապես պատմական հերոս է, այլ հավիտենական Լույս, Որի ներկայությունը վերափոխում է աշխարհն ու մարդուն: Ուստի, Հովհաննեսի Ավետարանը բացում է Հիսուսի աստվածային ինքնության խորագույն խորհուրդը՝ ցույց տալով, որ Քրիստոս նույն Աստվածն է, Որն սկզբից էր, և Որը մարմնավորվեց, որպեսզի մարդուն հաղորդակից դարձնի հավիտենական կյանքին. «Սա է հավիտենական կյանքը՝ որ ճանաչեն քեզ, միակ ճշմարիտ Աստծուն, և այն, ում դու ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. ԺԷ 3):

Եզրակացություն

Ավետարանների համեմատական դիտարկումը ցույց է տալիս, որ չորս ավետարանիչներից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ տեսանկյունից է ներկայացնում Հիսուս Քրիստոսին՝ ընդգծելով Նրա աստվածային և մարդկային էության տարբեր կողմերը:

Մատթեոսը Քրիստոսին ներկայացնում է որպես Հին Կտակարանի մարգարեությունների իրականացման, որպես խոստացված Մեսիայի և Թագավորի, որ եկել է՝ հաստատելու երկնային արքայությունը: Նրա համար Հիսուս նախևառաջ Օրենքի կատարողն է, ոչ թե խախտողը. «....չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. Ե 17): Մատթեոսը ցույց է տալիս, որ Հիսուսի կյանքի յուրաքանչյուր քայլ համապատասխանում է մարգարեների խոսքերին՝ ընդգծելով աստվածային ծրագրի շարունակականությունը:

Մարկոսը, ընդհակառակը, շեշտադրում է Հիսուսի մարդկային կողմը: Նրա համար Քրիստոս Աստծո Որդին է, սակայն իրական մարդ՝ հոգնած, տրտմած, գթառատ և երբեմն անգամ զայրացած: Մարկոսի Ավետարանը գործողությունների և ապրումների պատմություն է. այստեղ Հիսուս գործում է հզորությամբ, բայց ապրում մարդկային ցավի ամբողջ խորությունը: Այս կերպ Մարկոսը ցույց է տալիս, որ աստվածային զորությունը բացահայտվում է մարդկային խոնարհությամբ և տառապանքով:

Ղուկասը Հիսուսին ներկայացնում է որպես մարդկության համընդհանուր Փրկչի: Նրա Ավետարանում Տերը հայտնվում է որպես կարեկից Բժիշկ, որ բերում է փրկություն բոլորին՝ առանց տարբերության՝ հարուստ թե աղքատ, հրեա թե հեթանոս: Ղուկասն առանձնանում է իր մարդասիրությամբ և հոգեբանական խորությամբ. այստեղ Հիսուսի յուրաքանչյուր հրաշք և առակ ընդգծում է Աստծո ողորմածությունն ու ներողամտությունը:

Հովհաննեսը Հիսուսին ներկայացնում է ոչ թե որպես պատմական գործչի, այլ որպես մարմնացած աստվածային Բանի (Λόγος): Նրա Ավետարանում Քրիստոս հավիտենական էությունից եկած Լույսն է, որ մարմնավորվեց, որպեսզի մարդուն հաղորդակից դարձնի աստվածային կյանքին: Հովհաննեսի Քրիստոսը բացահայտում է աստվածության խորքը, և հենց Նա է ասում. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Այսպիսով՝ Մատթեոսի Քրիստոսը Մեսիա և Թագավոր է,Մարկոսի Քրիստոսը՝ Մարդ և Ծառա, Ղուկասի Քրիստոսը՝ Բժիշկ և Կարեկից Փրկիչ, Հովհաննեսի Քրիստոսը՝ Աստվածային Բան և Հավիտենական Լույս:

Չորս Ավետարանները միասին ամբողջացնում են Քրիստոսի կերպարը՝ միավորելով երկնային և երկրային, աստվածային և մարդկային բնությունները, ցույց տալով, որ Հիսուս միաժամանակ պատմական անձ է և հավիտենության Աստված:

Չորս ավետարանիչների հեղինակային յուրահատկությունները, ապրած ժամանակը և միջավայրը մեծապես ազդել են նրանց Ավետարանների ոճի, Հիսուսի կերպարի և կենտրոնական թեմաների վրա: Մատթեոսը կենտրոնանում է կանխագուշակությունների, մարգարեությունների կատարման վրա, Մարկոսը՝ անմիջական գործողությունների, Ղուկասը՝ մարդասիրության և կարեկցանքի, իսկ Հովհաննեսը՝ աստվածային խորության և հոգևոր վարդապետության վրա: Այս յուրահատուկ մոտեցումներն ստեղծում են Հիսուսի ամբողջական, բազմաշերտ պատկերը, որում նա միաժամանակ ներկայացված է որպես կատարյալ մարդ և Աստված:

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Դավաճանության դեպքերն ու ընկալումները Սուրբ Գրքում և քաղաքակրթական տարբեր միջավայրերում

Բառի ստուգաբանությունը

«Դավաճան(ություն)» բառի հիմքում «դավ» արմատն է, որը կարող է փոխառված լինել հին պարսկերեն dav ձևից՝ «խարդախություն, դարանակալություն, նենգություն» իմաստներով: Հավանական է նաև՝ բառն ունենա բնիկ հնդեվրոպական ծագում (հնխ. dhabh): Բառի առաջին հիմքով («դավ-») կազմությունները բավականին տարածված են՝ դյուրադավ, դավանք, չարադավ, դավադիր, դավաբեր, ազգադավ և այլն, իսկ «ճան» արմատն այդքան էլ կիրառելի չէ (ճակաճան–իգամոլ, գինեճան–գինեմոլ, խրախճան–խնջույք, տիրաճան – իր տիրոջը սիրող, երախճան–սանձ), և դրա ծագումն ու նշանակությունն անհայտ են:

«Դավաճան» բառը հստակ ստուգաբանությամբ ներկայացված է 1992 թ. «Հայոց լեզուի նոր բառարան»-ում. «Ձենտերէն dab = խաբել, նենգել, dava = նենգ, յոռի, հին պարսկերէն ճանահ = սիրող, ցանկացող, մոլի. լրիւ իմաստը՝ նենգել սիրող»: Այսպիսով՝ բառի առաջին՝ «դավ-» բաղադրիչը հնդեվրոպական արմատ է՝ «խարդախություն, նենգություն, մատնություն, որոգայթ» իմաստներով, իսկ երկրորդը՝ «-ճան» արմատը, պարսկական հիմք ունի՝ «սիրող, ցանկացող, մոլի» իմաստներով:

Դավաճանության լեզվական իմաստային լանդշաֆտը բավականին ընդարձակ է և բազմաբովանդակ: Չարարվեստ ամեն տեսակի խաբեություն և որոգայթադիր նենգագործություններ խորքային առումով դավաճանական բնորոշմանն են ենթակա: Մարդկային քաղաքակրթության պատմության առաջին օրերից իսկ հայտնի են դավաճանական արարքներն ու մեղսաթաքույց վարքագծի չարամիտ հետևանքները: Բոլոր այս նրբիմաստներն արտահայտված են նաև հին հունարեն և լատիներեն համարժեքներում. դավաճանությունը՝ որպես հաշվենկատ վերաբերմունք (հին հուն.՝ δόλος (dolos), լատ.՝ dolus – նախահնդեվրոպական *del («հաշվել, հաշվարկել»-ից), վատ արարք կամ բառացիորեն չարագործություն (հին հուն.՝ κακουργία (kakurgia), լատ.՝ maleficium), մեղսագործություն և ինքնաարդարացում (հին հուն.՝ επίβουλή (epibule)), կամովին հայտնելը կամ հանձնելը (հին հուն.՝ προδοσία), դարանակալում (լատ.՝ insidiae):

Հին եբրայերենում «դավաճանություն» բառի համարժեքը «բըգադ» է՝ նույնարմատ «հագուստ» («բեգեդ») բառին: Մարդկության մեջ առաջին անգամ հագուստը հայտնվում է այն բանից հետո, երբ Ադամն ու Եվան դեմ են գնում աստվածային պատվիրանին և ուտում Եդեմի պարտեզի արգելված ծառից: Դավաճանական այս արարքն ունեցավ իր հետևանքները հետագա սերունդների վրա. մարդիկ այդուհետ հագուստ կկրեն՝ ամոթալի մարմնի պատճառով. «Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և իմացան, որ մերկ են, և թզենու տերևներ կարեցին ու իրենց համար ծածկոցներ շինեցին» (Ծնն. 3:7): Վերջին գիտական ուսումնասիրություններում շեշտադրվում է այս հագուստների սոցիալական նշանակության հանգամանքը, ըստ որի՝ դրանք խորհրդանշում են Ադամի և Եվայի ինքնության կերպարանափոխությունը և Աստծո հետ ունեցած հարաբերությունների փոփոխությունները (տես Robert A. Oden, The Bible Without Theology: The Theological Tradition and Alternatives to It, Urbana, IL: University of Illinois Press, 2000, էջ 92–105):

Սուրբ Գրքից հիշարժան է Հակոբի որդի Հովսեփի պատմությունը, երբ Պետափրեսի կինը նրան մեղադրեց դավաճանության հանցանքով՝ որպես ապացույց ներկայացնելով նրա հագուստը (Ծնն. 39:11–18): Հագուստը մեղքի մասին է հիշեցնում, ուստի Աստված Ահարոնին քահանայական հագուստ շնորհելիս պատվիրում է այն պատրաստել «պատվի և փառքի համար» (Ելք 28:2): Հայերենում «դավաճանություն–հագուստ» իմաստաբանական խոսույթն առկա է հիմնականում դարձվածքներում: Անարդարացի, շողոքորթ և նենգ մտադրությունների դեպքում օգտագործվում են հետևյալ դարձվածքները՝ «շապիկը կարճ», «փեշը կեղտոտ», իսկ հեղինակազրկող և արատավոր երևույթների բացահայտման դեպքում ժողովուրդն ասում է՝ «քողը պատռվում է», «մարդու աչքի քողն ընկնում է» (տես Ա. Շախբազյան, Հագուստ անվանող բառերը դարձվածքներում, Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու. 2010, հ. 2, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, էջ 130):

Կարավաջո, Հուդայի համբույրը և Հիսուսի ձերբակալությունը, 1602 թ.

Դավաճանության դեպքերը Սուրբ Գրքում

Աստվածաշնչում նկարագրվում են բազմաթիվ պատմություններ, որտեղ պարզորոշ երևում են դավաճանության մտահղացման սցենարը և դրա վերաբերյալ սուրբգրային հեղինակների բացահայտ ընդդիմությունը: Կան դեպքեր, երբ իշխանության հասնելու համար կատարվում են անարդարացի, դավաճանական սպանություններ (Դատ. 9: 1–5), մինչև իսկ բնաջնջվում է թագավորական ամբողջ տունը (Դ Թագ. 11:1): Դավթի՝ եղբայրների հետ զոհաբերությանը մասնակցելը և Սավուղին սեղանակից չլինելը մղում են չարափառ արքային նիզակն ուղղել իր որդի Հովնաթանի ուղղությամբ (Ա Թագ. 20: 31), որը պաշտպանում է Դավթին: Բայց Սավուղը, չարացած Դավթի հանդեպ, մահապատժի է ենթարկում Աբիմելեքին և նրա քահանաների ընտանիքին՝ Դավթին օգնելու համար (Ա Թագ. 22: 11–18), թեև Սամուելը, Աստծո հրամանով, արդեն օծել էր Դավթին որպես Սավուղի իրավահաջորդի: Դավիթն էլ իր հերթին, լինելով միապետական վարչակարգի կողմնակից և թագավորական պատվի պաշտպան, սպանեց ամաղեկացուն, որ օգնել էր Սավուղին ինքնասպանություն գործել, «որ ձեռքը մեկնեց Տիրոջ օծյալին ոչնչացնելու համար» (Բ Թագ. 1:14): Դավթի երկու զորավարներ Բաանան և Ռեքաբը սպանեցին Սավուղի որդի Իբուսթեին՝ Դավթի կողմից վարձատրվելու ակնկալիքով, բայց վերջիններս նրանց մեղադրեցին դավաճանության համար և մահապատժի ենթարկեցին (Բ Թագ. 4:2–12): Հովաբն սպանեց Աբիսողոմին՝ իշխանությունը տապալելու և իր հորը՝ Դավթին, թագավորությունից գահընկեց անելու փորձի համար (Բ Թագ. 18:14): Թագավորին հասցված վիրավորանքը նույնպես աններելի էր. Գերայի որդի Սեմեին մեղադրվեց՝ Դավթին վիրավորելու և հայհոյելու պատճառով (Բ Թագ. 16: 5–8): Երբ Սեմեին ներողություն խնդրեց Դավթից, վերջինս ներում շնորհեց նրան (Բ Թագ 19:21), բայց Սողոմոն թագավորը պատրվակ գտավ իր հոր վրեժը լուծելու համար (Գ Թագ. 2:46): Ադոնիան մեղավոր ճանաչվեց դավաճանության համար (Դավթից հետո իրեն թագավոր էր հռչակել՝ անտեսելով Սողոմոնին) և վերջապես մահապատժի ենթարկվեց (Գ Թագ. 1:5, 2:25):

Սուրբ Գրքի պատմական գրքերում տեղ գտած հիմնական իրադարձություններում դավաճանություն են համարվում տիրող իշխանության և ղեկավարների դեմ բարձրացված ապստամբություններն ու խռովությունները: Տերն անողոք է այդպիսի անձանց հանդեպ, ինչպես երևում է Դավիթ թագավորի աղերսագին խնդրանքում. «Եվ դու, ո՜վ Աստված, նրանց կգցես ապականության հորը. արյուն թափող և նենգավոր մարդիկ իրենց կյանքի օրերի կեսին չպիտի հասնեն, իսկ ես իմ հույսը Քեզ վրա եմ դրել» (Սաղմ. 55:23): Սակայն եթե թագավորը յուրային ժողովրդին հեռացնում է հայրենի օրենքներից և նախապատվություն տալիս թշնամի ժողովրդի սովորույթներին ու կրոնական պաշտամունքին, արժանանում է Աստծո անեծքին, և մարգարեների ու ժողովրդի բարձրացրած արդար բողոքն այս պարագայում համարվում է տեղին և ընդունելի:

Նոր Կտակարանում դավաճանության ամենահայտնի արարքը Հուդայի համբույրն է: Կան մի քանի բացատրություններ, թե ինչու Հուդան դավաճանեց Հիսուսին: Մարկոսի Ավետարանում՝ ՆԿ-ի ամենավաղ գրված գրքում, ներկայացվում է, որ երբ Հուդան գնում է քահանայապետերի մոտ՝ մատնելու Հիսուսին, նրան որպես վարձատրություն առաջարկում են գումար, բայց միանշանակ չէ, որ փողից մղված է նա դավաճանում: Մատթեոսի Ավետարանում, մյուս կողմից, նա հարցնում է, թե ինչ են վճարելու իրեն՝ Հիսուսին հանձնելու համար: Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններում սատանան մտնում է Հուդայի մեջ՝ ստիպելով նրան դավաճանել Հիսուսին: Ըստ ոմանց՝ Հուդան կարծում էր, որ կարող էր գումար ստանալ Հիսուսին դավաճանելու դիմաց՝ առանց Նրան սպանելու, քանի որ նա կհասցներ փախչել, ինչպես նախկինում շատ անգամներ էր արել: Տեսակետներից մեկի համաձայն՝ Հուդան հիասթափված աշակերտ էր, որը Հիսուսին դավաճանում է ոչ այնքան այն պատճառով, որ նա սիրում էր փողը, որքան որ նա սիրում էր իր երկիրը և կարծում էր, որ Հիսուսը ձախողել էր:

Ավետարանները հուշում են, որ Հիսուսը կանխատեսել է (Հովհ. 6:64, Մատթ. 26:25) և թույլ տվել Հուդայի դավաճանությունը (Հովհ. 13:27–28): Բացատրություններից մեկն այն է, որ Հիսուսը թույլ է տվել դավաճանությունը, քանի որ դա կնպաստեր Աստծո ծրագրի իրականացմանը: Մյուսն այն է, որ անկախ դավաճանությունից՝ Հիսուսը վերջիվերջո խաչելության էր ենթարկվելու: 2006 թվականի ապրիլին թարգմանվեց ղպտերեն մի ձեռագիր, որը վերնագրված էր Հուդայի Ավետարան (ապոկրիֆ գործ՝ գրված Ք. հ. 200 թ.), որտեղ ասվում է, որ Հիսուսն է ասել Հուդային՝ դավաճանել Իրեն, չնայած որոշ գիտնականներ կասկածի տակ են դնում թարգմանությունը:

Հուդայի արարքը մեկնաբանվել է տարբեր գիտակարգերի ներկայացուցիչների կողմից և տարբեր տեսանկյուններից: Ոմանք պնդում են, որ եթե Հիսուսը կանխատեսում է Հուդայի դավաճանությունը, ապա դավաճանությունն ազատ կամքի դրսևորում չէ, և, հետևաբար, Հուդան չպետք է պատժվի: Ընդհակառակը՝ ուրիշները պնդում են, որ հենց այն պատճառով, որ դավաճանությունը կանխագուշակվել է, դա չի խանգարում Հուդային այս հարցում իր ազատ կամքը գործադրելու: Այլ գիտնականներ պնդում են, որ Հուդան գործել է՝ հնազանդվելով Աստծո կամքին: Ավետարանները հուշում են, որ Հուդան, ըստ երևույթին, կապված է Աստծո նպատակների իրականացման հետ (Հովհ. 13:18, Հովհ. 17:12, Մատթ. 26:23–25, Ղուկ. 22:21–22, Մատթ. 27:9–10, Գործք. 1:16, 20), սակայն «վայ նրան», «ավելի լավ կլիներ ծնված չլիներ» (Մատթ. 26:23–25): Ասույթին բնորոշ դժվարությունը պարադոքս է. եթե Հուդան չծնվեր, մարդու Որդին, ըստ երևույթին, այլևս չէր անի՝ «ինչպես գրված է Նրա մասին»: Այս ներողամտության մոտեցման հետևանքն այն է, որ Հուդայի գործողությունները համարվում են անհրաժեշտ և անխուսափելի, սակայն հանգեցնում են դատապարտման: Մեկ այլ բացատրությունն էլ այն է, որ Հուդայի ծնունդը և դավաճանությունը միակ ճանապարհը չէին, որով մարդու Որդին կարող էր տառապել և խաչվել: Սակայն անկախ ցանկացած անհրաժեշտությունից՝ Հուդան պատասխանատու է իր արարքի համար (Մարկ. 14:21, Ղուկ. 22:22, Մատթ. 26:24):

Ինչպես Հուդան՝ Քրիստոսի աշակերտը, այնպես էլ յուրաքանչյուր քրիստոնյա, որ մկրտությամբ դառնում է Աստծո որդեգիր, պատասխանատու է իր կյանքի և գործերի համար. «Քրիստոսի Անունը կրել և Քրիստոսի հետքերով չքայլել՝ մի՞թե չի նշանակում դավաճանել Աստծո Անվանը և հեռանալ փրկության ճանապարհից» (Կիպրիանոս Կարթագենացի (մոտ 200–258)):

Դավաճանությունը հոգևոր փոխհարաբերության դաշտում մարդ–մարդ հորիզոնական հարթությունից տեղափոխվում է մարդ–Աստված ուղղաձիգ հարթություն: Դարձյալ միմյանց հանդեպ վստահության երաշխիքով են տեղի ունեցել մարդու՝ Աստծուն որդեգրվելը և աստվածային կամքի մարդասեր հաճությամբ մարդկությանը փրկություն շնորհելու ձգտումը: Սուրբ Գիրքը բազում օրինակներով մեզ պատմում է, թե Աստծուն դավաճանելու և մեղսագործելու դեպքում ինչպես է կյանքի հունը փոխվում: Հիշենք Դավիթ թագավորին, որը մի մեղքը չընդունելու հետևանքով ավելի էր ընկղմվել մեղքերի խորխորատում: Նա սխալվեց՝ տանը մնալով, երբ պետք է գնար պատերազմի (Բ Թագ. 11:1), ուշադրություն դարձրեց արգելված ցանկությանը (Բ Թագ. 11:3)՝ միտումնավոր շնություն գործելով (Բ Թագ. 11:4), փորձեց թաքցնել իր մեղքը՝ մոլորեցնելով մեկ ուրիշին (Բ Թագ. 11:6–15): Նա այսպես շարունակում է քողարկումը՝ ի վերջո սպանություն կատարելով (Բ Թագ. 11:15, 17): Բազմիցս մեղանչելը թուլացնում է մարդու զգայունությունն Աստծո օրենքների և այլ մարդկանց իրավունքների նկատմամբ: Դավիթն անտարբեր էր Ուրիայի մահվան լուրի հանդեպ, քանի որ նա անզգամ էր իր մեղքի նկատմամբ (Բ Թագ. 11:23–25): Դավթի այս երկկողմանի դավաճանության պատճառով իր որդին մեռած ծնվեց: Սակայն կա ներման հնարավորություն, երբ առկա է զղջում. «Ես մեղք եմ գործել Տիրոջ դեմ» (Բ Թագ. 12:13, 24:10, 17):

Շարունակելի

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ինչու Սամուել մարգարեն սպանեց ամաղեկացիների թագավորին

«Եվ Սամուելն Ագագին սպանեց Տիրոջ առջև՝ Գաղգաղայում»

(Ա Թագ. 15:33):

Իսրայելի որդիները թագավոր են ուզում

Երբ Սամուել մարգարեն ծերացավ, իր որդիներին՝ Հովելին և Աբիային, կարգեց Իսրայելի դատավորներ: Վերջիններս, սակայն, չգնացին իրենց հոր ճանապարհով, «այլ ընչաքաղցության հետևից ընկնելով՝ կաշառք էին վերցնում և իրավունքն աղավաղում» (Ա Թագ. 8:3): Եվ ահա հավաքվեցին Իսրայելի ծերերը և գալով Արիմաթեմ՝ Սամուել մարգարեի մոտ՝ նրանից պահանջեցին թագավոր կարգել իրենց վրա. «Ահա դու ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ, մեզ վրա մի թագավոր կարգիր, որ մեզ դատի» (Ա Թագ. 8:5): Բնականաբար, սա Սամուելին դուր չեկավ, քանի որ այս կերպ նրանք Տիրոջն անարգեցին:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք ճիշտ վարվեցին իսրայելացիները և թագավոր պահանջելիս իրական ի՞նչ հիմնավորում ունեին:

Դեռևս Բ Օրենք 14-րդ գլխում՝ թագավորի մասին օրենքներում, հանդիպում ենք հետևյալ մտքին. «Եվ եթե մտնես այն երկիրը, որ Տերը՝ քո Աստվածը, տալու է քեզ, ժառանգես այն ու բնակվես նրա մեջ և ասես՝ «Մենք էլ իշխան ունենանք, մեր շուրջը գտնվող մյուս ազգերի նման», ապա իշխան կկարգես նրան, որին կընտրի Տերը՝ քո Աստվածը (Բ Օրենք 17:14—15): Հետաքրքրական է, որ եբրայերեն բնագրում այս արտահայտությունների միջև ակնհայտ տարբերություն կա.

Բ Օրենք 17:14 — «մեզ վրա թագավոր կարգիր»,

Ա Թագ. 8:5 — «մեզ թագավոր տուր»:

Առաջին արտահայտությունը բովանդակում է հետևյալ իմաստը. «մեզ վրա թագավոր կարգիր, որպեսզի նա իշխի մեզ և կառավարի ամենքիս», իսկ երկրորդն իր բնույթով ավելի պահանջատիրական է. «մեզ թագավոր տուր, որին մենք կկարողանանք կառավարել և օգտագործել մեր իսկ կարիքների համար»: Ահա թե ինչու իսրայելացիների արտահայտությունը դուր չեկավ Սամուելին, և թե ինչու այս կերպ նրանք անարգեցին Աստծուն. «Եվ Տերն ասաց Սամուելին. «Լսիր ժողովրդի ձայնը, ինչ էլ որ ասեն քեզ: Նրանք ոչ թե քեզ անարգեցին, այլ չուզեցին, որ ես թագավորեմ իրենց վրա» (Ա Թագ. 8:7):

Այդուհանդերձ, Աստված անսաց ժողովրդի ձայնին՝ միաժամանակ պատվիրելով Սամուելին փոխանցել Իր պատգամները՝ Իրենից թագավոր խնդրող ժողովրդին. «Արդ, լսիր նրանց ձայնը, բայց նրանց տեղյակ պահիր, բացատրիր թագավորի իրավունքները, որ իշխելու է իրենց վրա» (Ա Թագ. 8:9): Իր խոսքի վերջում Սամուելը զգուշացրեց ժողովրդին՝ ասելով. «Այն ժամանակ դուք բողոքելու եք ձեր ընտրած թագավորի դեմ, սակայն Տերը ձեզ չի լսելու այդ օրը, քանի որ դուք ինքներդ ձեզ համար թագավոր ընտրեցիք» (Ա Թագ. 8:18):

Ահա այս ամենից հետո է, որ նա Սավուղին թագավոր օծեց և կարգեց Իսրայելի ժողովրդի վրա:

Դեռևս Ելից գրքից սկսյալ՝ աստվածաշնչյան պատմությունը զարգացնում է այն գաղափարը, որ Տերը պատերազմում է իսրայելացիների կողմից՝ փառաբանվելով որպես զինվոր և թագավոր: Հեսուի գիրքը նույնպես կրկնում է այս գաղափարը, այն է՝ իսրայելացիների հաղթանակները Տիրոջ հաղթանակներն են: Սուրբ Գիրքը լի է օրինակներով, որոնցում Աստված անվանվում է թագավոր (Ելք 15:18, Ա Թագ. 8:7, 10:19): Աստծուն իբրև թագավորի ներկայացնելը տարածված թեմա է հին մերձավորարևելյան գրականության մեջ: Օրինակ՝ ասորեստանցիներն Աշուր աստծուն համարում էին թագավոր, իսկ երկրի վրա իշխող թագավորին՝ նրա ներկայացուցիչ: Իսրայելի յուրահատկությունը, սակայն, այն էր, որ թագավորության հաստատումից առաջ Աստված երկրային, այսպես կոչված, «համարժեքներ» չուներ, ինչպես այլ ազգերի պարագայում էր: Այն փաստը, որ Աստված զորահրամանատարներ էր կարգում, հաղթանակներ էր ապահովում, նշանակում է, որ Տերը՝ որպես թագավոր, ինքն էր մարտի դաշտում առաջնորդում Իսրայելի բանակը: Այսուհետ Իսրայելում նոր թագավորի՝ տվյալ դեպքում Սավուղի գահակալությունը պետք է դառնար Աստծո երկնային թագավորության արտացոլումը երկրի վրա:

Յուլիուս Շնոր ֆոն Կարոլսֆելդ. «Սավուղի մերժումը», 19-րդ դ.

Սամուելը, ինչպես Մովսեսն ու Դեբորան, առաջնորդում էր ժողովրդին իր մարգարեական կարգավիճակով: Թագավորական կառավարման հաստատմամբ արդեն նա ստանձնում է խորհրդականի դեր: Աստծուց հայտնություններ ստանալու միջոցով, ժողովրդին առաջնորդելու փոխարեն, մարգարեն պետք է առաջնորդեր թագավորին, որը կպահպաներ մարգարեի խորհուրդը այս կամ այն բանն անելու կամ չանելու հարցում. «Այն մարդը, որ չի լսի իմ անունից խոսող մարգարեին, նրանից վրեժ կլուծեմ» (Բ Օրենք 18:22): Հին Մերձավոր Արևելքում թագավորը համարվում էր պետության մարմնացում, այդ իսկ պատճառով նա պատասխանատու էր ժողովրդի վարքագծի համար, իսկ ժողովուրդն իր հերթին կարող էր պատժվել կամ օրհնվել թագավորի կատարած գործողությունների համար:

Սամուելի հրաժեշտի պատգամը

Ժողովրդի պահանջը կատարելուց և Իսրայելի վրա թագավոր կարգելուց հետո Սամուելը հրաժեշտի խոսքով դիմում է իսրայելացի բոլոր այրերին: Տարածված երևույթ է, երբ պետության նոր ղեկավարն արդեն իսկ առկա հիմնախնդիրների համար կարող է մեղադրել նախկին վարչակազմին: Այս առումով՝ պատմության ընթացքում քաղաքականությունն այդքան էլ մեծ փոփոխություններ չի կրել. հին աշխարհում ևս նմանատիպ գործելաոճը բավականին տարածված էր: Ուստի, այս տեսանկյունից, Սամուելի ցանկությունը, որ ժողովուրդը հանրայնորեն վկայի իր կառավարման ընթացքում ցուցաբերած արդար և իրավացի գործելաոճի մասին, բավականին հասկանալի է. «....Իմ վաղ հասակից մինչև այսօր ես ձեզ ղեկավարեցի: Ես ահա կանգնած եմ ձեր առաջ, և դուք Տիրոջ ու Նրա օծյալի ներկայությամբ մեղադրե՛ք ինձ, թե ես մեկի եզը խլե՞լ եմ կամ էշը տարե՞լ, ձեզանից ո՞ւմ եմ ճնշել կամ որևէ մեկին զրկե՞լ եմ, ո՞ւմ ձեռքից եմ կաշառք կամ ընծաներ վերցրել: Պատասխան տվեք ինձ, որպեսզի ես հատուցեմ ձեզ» (Ա Թագ. 12:2—4): Բնականաբար, ժողովուրդն այլ բան չէր կարող պատասխանել, քան խոստովանել, որ մարգարեն իրենց դեմ չի մեղանչել, չի զրկել և ոչ մեկից ոչինչ չի խլել:

Իր խոսքի ավարտին Սամուելը պատգամում է ժողովրդին երկյուղ կրել Տիրոջից և ճշմարտությամբ ծառայել նրան. «Քանի որ տեսաք, թե մեզ համար ինչ մեծ գործեր արեց, իսկ եթե չարությամբ գործեք, թե՛ դուք, թե՛ ձեր թագավորը կորստյան կմատնվեք» (Ա Թագ. 12:24—25):

Սավուղի սխալը

Մարգարեական հիշյալ խոսքերը, բնականաբար, իրականություն դարձան: Տերը խոսքն ուղղեց Սամուելին և ասաց. «Ձղջացել եմ, որ թագավոր դարձրի Սավուղին, քանի որ ինձնից շուռ եկավ և իմ խոսքերը չպահեց» (Ա Թագ. 15:11):

Այս ամենից առաջ՝ 15-րդ գլխի սկզբում, Սավուղը Սամուելի միջոցով կարգադրություն է ստանում Տիրոջից՝ հարվածելու ու ոչնչացնելու Ամաղեկին և Հարիմին, ինչպես նաև նրանց պատկանող ամեն ինչ: Ելք 17-րդ գլխից հիշում ենք, որ ամաղեկացիները Եգիպտոսից ելքի ժամանակ փակել էին Իսրայելի ճանապարհը, ինչի համար Տերը ցանկանում է վրեժխնդիր լինել և այդ իրականացնել Սավուղի միջոցով. «....Նրանցից ոչ ոք չպետք է փրկվի: Կկոտորես նրանց ու կոչնչացնես բոլորին՝ տղամարդ թե կին, երեխա թե կաթնակեր մանուկ, արջառ ու ոչխար, ուղտ ու էշ» (Ա Թագ. 15:3): Ինչպես զոհաբերությունների որոշ տեսակներ, որոնք ամբողջությամբ պատկանում էին Աստծուն, պատերազմի ավարը ևս շատ հաճախ կարող էր պատկանել միայն Տիրոջը, և քանի որ սա Աստծո պատերազմն էր, և ավարը պետք է պատկաներ Նրա՝ որպես հաղթողի, այդ իսկ պատճառով հարկ էր, որ Սավուղն այն ամբողջությամբ ոչնչացնի:

Վերջինս ջախջախեց Ամաղեկին, Հարիմի ամբողջ զորքը սրի քաշեց, սակայն կենդանի թողեց Ամաղեկի թագավոր Ագագին. «....խնայեցին ընտիր ոչխարների ու արջառների հոտերը, պտղատու և խաղողի այգիները, ամեն տեսակ բարիքները, չուզեցին ոչնչացնել դրանք, իսկ ինչ որ անարժեք ու անպետք էր, բնաջնջեցին» (Ա Թագ. 15:9): Ոչխարներից ու արջառներից Սավուղը Տիրոջը ողջակեզներ մատուցեց: Այս կերպ, սակայն, նա թույլ տվեց մեծագույն սխալ. չանսաց Տիրոջ ձայնին և գերադասելով ավարը՝ չարիք գործեց Նրա դեմ: Սամուելը խստորեն հանդիմանեց Սավուղին այս արարքի համար. «Մի՞թե Տիրոջ համար ավելի հաճելի են ողջակեզներն ու զոհերը, քան Տիրոջ ձայնին անսալը: Հնազանդությունն ավելի լավ է, քան ընտիր զոհը, և անսալն ավելի լավ է, քան խոյերի ճարպը» (Ա Թագ. 15:22): Եվ այս դեպքում, փաստորեն, զոհաբերությունից առավել կարևոր էին Տիրոջ հրահանգները լսելն ու կատարելը:

Սավուղը զղջաց իր արարքի համար՝ խնդրելով Սամուելին ներել իր մեղքերը, բայց վերջինս պատասխանեց. «Ես քեզ հետ չեմ լինի, քանի որ արհամարհեցիր Տիրոջ խոսքը, և Տերը քեզ մերժելու է իբրև Իսրայելի թագավորի» (Ա Թագ. 15:26): Այս խոսքերն ասելուց հետո նա ցանկանում էր հեռանալ, բայց Սավուղը բռնեց նրա թիկնոցի ծայրից և պատռեց այն, ինչին ի պատասխան՝ Սամուելը հայտարարեց, որ Տերը վերցնելու է նրանից Իսրայելի թագավորությունը և տալու է այն ավելի արժանավոր մեկին: Եվ չնայած այս ամենին՝ Սամուելը Սավուղի հետ վերադարձավ, և վերջինս երկրպագություն արեց Տիրոջը:

Եվ ահա 15-րդ գլխի վերջնամասում ականատես ենք դառնում կարևորագույն մի դրվագի. Սամուելը հրամայում է իր մոտ բերել Ամաղեկի թագավոր Ագագին և սպանում է նրան: Հետաքրքրական է Ագագ անվան ստուգաբանությունը. որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ այն ունի աքքադական ծագում և նշանակում է «բարկանալ, զայրանալ»: Հունարեն անվանումն իր հերթին ծագում է սեմական «ագագ» բառից, որը նշանակում է «բոցավառվել»:

Բավականին տպավորիչ և ազդեցիկ է այս դրվագում հատկապես Ագագի և Սամուելի երկխոսությունը.

«Մի՞թե այսպես դառն է մահը» (Ագագ):

Սամուելն ասաց Ագագին. «Ինչպես որ քո սուրը կանանց որդեկորույս դարձրեց, նույն ձևով էլ որդեկորույս կլինի քո մայրը կանանց մեջ» (Ա Թագ. 15:32—33):

Եվ Սամուելն Ագագին սպանեց Տիրոջ առջև՝ Գաղգաղայում: Եբրայերեն բնագրում «սպանել» բայի փոխարեն կիրառված է «կտոր-կտոր անել» արտահայտությունը, որն ամբողջ Հին Կտակարանում օգտագործվում է գեթ մեկ անգամ:

Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տոն Գյուտ Խաչի

↩ էջ 3

Գողգոթան այն վայրն է, որտեղ Աստծու Անարատ Գառը՝ Քրիստոս, մորթվեց հանուն մարդկության, և խաչը դարձավ «սանդուղք կենաց, մեզ ճանապարհ և տապան կենդանութեան» (Ղազար Ա Ջահկեցի, Գիրք նորաբոյս, որ կոչի երգարան, Երևան 2005, էջ 85), իսկ Գողգոթան՝ «այն ահ ու սարսափի բլուրը, սրբութիւն սրբոց է դարձել, ուր միայն խորին ակնածանքով կարելի է ոտք դնել» (Գէորգ եպս. Չէորէքչեան, Քարոզներ եւ ելոյթներ, Ս. Էջմիածին 2013, էջ 534):

Քրիստոս խաչի տառապալից ճանապարհն անցավ և Իր արյամբ Խաչի վրա «անջնջելիորեն գրեց մեր ազատության ու որդեգրության կտակը» (Դավիթ Անհաղթ, Ներբողներ, Ս. Էջմիածին 2008, էջ 25):

Առաջին երեք դարերում քրիստոնեությունը և քրիստոնյան հալածվում էին: Կոստանդիանոս կայսեր հռչակած Միլանի հրովարտակով քրիստոնյաներին արտոնվեց ազատ կերպով դավանել նոր կրոնը: Այստեղ խորհրդանշական կապ կա Տիրոջ խաչափայտի ի հայտ գալու և քրիստոնեության՝ ստորերկրյա կյանքից դուրս գալու միջև: Ինչպես Տիրոջ խաչափայտը երեք դար մնաց Գողգոթայում՝ ամայության մեջ լքված, և ի վերջո շնորհիվ բարեպաշտ Հեղինե թագուհու՝ գտնվեց՝ ի երկրպագություն հավատացյալներիս, այնպես էլ քրիստոնությունը երեք դար շարունակ հալածվում էր, քրիստոնյաները ենթարկվում էին անասելի տառապանքների, և շատերն էլ հանուն Քրիստոսի Լույս հավատքի մարտիրոսության անթառամ պսակին արժանացան՝ դառնալով Երկնքի Արքայության ժառանգորդները: Պատմականորեն երկու կարևոր իրադարձություններ տեղի ունեցան. գտնվեց Քրիստոսապսակ խաչը, և քրիստոնյաներին հնարավորություն տրվեց ընդհատակից դուրս գալու և ներկայուղ դավանելու Քրիստոսին:

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը Խաչի Գյուտի առիթով պատգամում է. «Գտի՛ր գիտակցութիւնդ՝ ինքզինքդ բարձրացնելու կեանքի աղիւսներէն, մարդկային ինկածութիւններէն. գտի՛ր քաջութիւնդ տիրանալու հոգեկան ու բարոյական ազատութեանդ.... Պատրաստ եղի՛ր ի հարկին նեղութեանց ենթարկուելու, յանուն արդարութեան, յանուն ողջախոհութեան և յանուն Աւետարանի» (Շնորհք արք. Գալուստեան, Տաղաւար տօներ, Երուսաղէմ, 1976, էջ 98—99):

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ
Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. Հովհան Ոսկեբերան.
Քրիստոնեական բարոյականությունը ժամանակից վեր է

Եկեղեցու լուսապայծառ սրբերից, աստվածընտրյալ վարդապետներից է Ս. Հովհան Ոսկեբերանը՝ ճշմարտության անբիծ հովիվն ու հավատի անսասան վահանը, որի բարոյական տեսակը մշտամնա ուղեցույց է յուրաքանչյուր քրիստոնյայի համար: Նրա խոնարհությունը հակակշիռ է ամբարտավանությանը, նրա արդարությունը՝ կեղծիքին, իսկ սերը՝ անտարբերությանը:

Անտարակույս, ճշմարիտ քրիստոնյան պետք է քայլի երանելի վարդապետի կյանքի ճանապարհով, որ խորհրդանշում է.

- անզիջում հավատ և ճշմարտասիրություն,
- խոնարհություն և մեծահոգություն,
- արդարություն և կարեկցանք:

Անուրանալի է, որ Հովհան Ոսկեբերանն ուներ անսակարկ հավատարմություն: Նա չէր ընկրկում անարդարության դիմաց՝ լիներ դա իշխանական պալատում թե եկեղեցական միջավայրում: Կոստանդնուպոլսի պատրիարք դառնալով՝ նա սկսեց պայքարել շքեղասիրության և կեղծ բարեպաշտության դեմ: Թեպետ դրա համար արժանացավ իշխանավորների թշնամությանը, սակայն չդավաճանեց իր տիրաբաղձ համոզմունքներին: Հիրավի, նրա համար ճշմարտախոսությունը և հավատը գերակա էին ամենայն նյութական բարիքներից ու մարդահաճությունից:

Չնայած իր բարձր դիրքին՝ Հովհան Ոսկեբերանը չձգտեց փառատենչության, ապրեց ծառայության և ինքնազոհաբերման ոգով: Նրան աքսորեցին, վիրավորեցին, անարդար մեղադրեցին, սակայն նա չդառնացավ: Սրբի օրինակելի խոնարհությունը և տոկունությունը առհավատչյա են իսկական հավատացյալի հոգու զորության համար: Նա երբեք չկորցրեց իր ներողամտությունը, աղոթեց իրեն հալածողների համար՝ ապացուցելով, որ քրիստոնեական սերն ու ներումը ամենամեծ հաղթանակն են չարի հանդեպ: Նրա համբերությունը մեզ հիշեցնում է, որ խաղաղությունը չի գալիս վրեժխնդրությունից, այլ մեծահոգությունից:

Ոսկեբերանի կյանքը սիրո կենդանի վկայություն է: Նրա քարոզները ևս հագեցած էին մարդասիրությամբ և արդարության կոչերով: Մարդկանց հորդորում էր հոգ տանել աղքատներին, հիվանդներին և անտուններին՝ հիշեցնելով, որ ամեն մարդու մեջ պետք է տեսնել Քրիստոսին. «Եթե չես տեսնում Քրիստոսին աղքատի աչքերում, չես կարող տեսնել Նրան խորանի վրա»: Ս. Հովհանը թելադրում էր սիրել գործով, ոչ թե խոսքով, օգնել յուրաքանչյուր կարիքավորի՝ իբրև Աստծուն մատուցված կենդանի զոհաբերություն: Այս օրինակը մեծապես արժեքավոր է մեր ժամանակներում՝ անտարբերության և եսասիրության դարաշրջանում:

Ս. Հովհան Ոսկեբերանը սերունդներին թողեց ոսկեղեն գրական ժառանգություն՝ մեկնություններ, դավանաբանական և հակաճառական երկեր, քարոզներ, ճառեր, ներբողներ ու նամակներ: Նրա խոսքի ճոխությունը, լեզվի երաժշտականությունը և ճարտասանական փայլը պատճառ դարձան, որ Եկեղեցին հավիտյան նրան կոչի Ոսկեբերան: Դեռ 5-րդ դարում նրա երկերից շատերը թարգմանվեցին հայերեն՝ դառնալով մեր հոգևոր մշակույթի անբաժանելի մասը:

Ծնվել է մոտ 347 թ. Անտիոքում՝ ազնվական ու աստվածապաշտ ընտանիքում: Նրա ծնողները, օրհնված բարեպաշտությամբ, որդուն դաստիարակել են հավատի ոգով, աստվածասեր մտքով ու մաքուր վարքով: Երիտասարդ Հովհանը դեռ վաղ տարիքից իր կյանքը նվիրեց աստվածային ճշմարտության որոնմանը՝ ընտրելով ժուժկալության, աղոթքի և Սուրբ Գրքի խորհուն ընթերցման ուղին: Մոր խնդրանքով նա սկզբում չհեռացավ հայրական տնից, սակայն ապրեց ասես անապատում՝ մերժելով աշխարհիկ փառքն ու մարմնական ցանկությունները: Իսկ մոր մահից հետո, մխիթարություն որոնելով միայն Աստծո խոսքում, նա գնաց Անտիոքի անապատ՝ իր անձն ընծայելով անօրինակ ճգնության: Տարիներ շարունակ՝ 374–380 թթ., ապրեց որպես ճգնավոր՝ անձանձիր աղոթքով, հոգևոր լռության մեջ:

Շուտով հիվանդությունն ստիպեց Ոսկեբերանին թողնել անապատը և վերադառնալ ծննդավայր, որտեղ էլ 380 թ. ձեռնադրվեց սարկավագ, ապա՝ վեց տարի անց, քահանա: Ս. Հովհանն իր աստվածատուր խոսքի զորությամբ դարձավ անզուգական քարոզիչ, իսկ 398 թ. Աստծո նախախնամությամբ բազմեց Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին: Այնտեղ նրա առաքելությունը կենտրոնացավ մայրաքաղաքի բարքերի ուղղման վրա. նա պախարակեց այն անբարո սովորությունները, որ կործանում էին մարդկանց հոգիները: Իր եռանդուն հովվությամբ Ոսկեբերանը Եկեղեցու գիրկը վերադարձրեց մոլորյալներին, ապաշխարության կոչեց խոտոր ուղիների վրա գտնվողներին:

Սակայն արդարության կրակը վառեց անիրավների հպարտությունը, քանի որ Ս. Հովհանն անաչառությամբ հանդիմանեց ոչ միայն մեղավոր ժողովրդին, այլև չարաբարո հոգևորականներին ու հատկապես իշխաններին: Նրա խորհուրդներն ու խիզախ խոսքերը բորբոքեցին թագուհի Եվդոքսիայի զայրույթը, երբ վերջինս մեղադրվեց այրի կնոջ այգին խլելու համար: Սուրբ հայրապետը հիշեցրեց նրան Հեզաբելի դատապարտությունը՝ ասելով. «Այսպիսի բաների համար Հեզաբելը կրեց բարի Աստծո բարկությունը»: Թագուհին, տարված փառասիրությամբ և վշտացած դառը ճշմարտությունից, սկսեց դավեր նյութել վարդապետի դեմ: Սակայն Ոսկեբերանը, Հովհաննես Մկրտչի արիությամբ լցված, շարունակեց բացահայտորեն կշտամբել արքունի անբարոյականությունն ու ցուցամոլությունը: Թագուհին և Ալեքսանդրիայի պատրիարք Թեոփիլոսը նենգաբար միավորվեցին նրա դեմ՝ 403 թվականին անիրավ ժողով գումարելով և սրբին պաշտոնանկ անելով: Այնուամենայնիվ, աստվածային արդարությունը չուշացավ: Կոստանդնուպոլսում աղետներ սկսվեցին. քաղաքում և արքունական ապարանքում որոշ մեծամեծներ մահացան: Դրանից զարհուրած թագուհին իր ամուսնուն համոզեց, որ Ս. Հովհանը վերադառնա իր աթոռին: Սուրբը, մեղմությամբ հաղթելով նենգությանը, վերստին բազմեց աստվածահիմն գահին՝ շնորհալի վարդապետությամբ լուսավորելով հավատացյալներին:

Երբ Եվդոքսիան նոր արձան կանգնեցրեց իր փառքի համար, դարձյալ արժանացավ Ոսկեբերանի հանդիմանանքին. «Աստծուն ատելի են նրանք, ովքեր կորցնում են իրենց պարկեշտությունը»: Թագուհին չար բաներ խորհեց Ս. Հովհանի դեմ, սա իմացավ սուրբը և ճառում ասաց. «Կրկին մոլեգնում է Հերովդիադան, որ ճշմարտության պատճառով անհիրավությամբ կտրի Հովհանի գլուխը»: Չլռելով՝ Ոսկեբերանը նույն խիզախությամբ ի դերև հանեց պալատական զեխություններն ու շվայտությունները: Եվ հակառակ ժողովրդի համակրանքին՝ Արկադիոս կայսրն ու Եվդոքսիա կայսրուհին նրան նորից աքսորելու հրաման արձակեցին:

Մեծանուն սուրբը՝ խաչն ուսին, հոժարությամբ ընթանում էր աքսորի արահետներով: Ճանապարհին էլ Աստծո կենդանի ճշմարտությունը քարոզելուց չէր դադարում՝ մխիթարելով և զորացնելով ունկնդիրներին: 407 թ. Պոնտոսի Կոմանա քաղաքում նա հոգին խաղաղությամբ հանձնեց Տիրոջը: 438 թ. մարմինը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և ամփոփվեց Ս. Առաքելոց եկեղեցում:

Այսպես՝ Ս. Հովհան Ոսկեբերանն իր աստվածահաճո ընթացքով ապացուցեց, որ քրիստոնեական բարոյականությունը ժամանակից վեր է: Դարերի հոլովույթում շատ անուններ են անհիշատակ մնում, բայց նա այն դեմքերից է, որոնց կերպարը մնում է լուսափայլ ու անթառամ: Նրա ուսմունքը հավերժ հիշեցնում է, որ մարդը պետք է ապրի ոչ թե փառքի, այլ արդարության ու բարեսիրության համար:

Անկասկած, խոնարհությունն ու սիրո գործնական դրսևորումը կարող են դառնալ հոգևոր հավասարակշռության բանալին այս բարդ աշխարհում: Արդ, մեզ լոկ մնում է ոսկեբերանյան բառերով աղաղակել Աստծուն. «Տե՛ր և Աստված իմ, խորտակիչը թող չմոտենա ինձ, որ կնքված եմ Քո պատվական արյամբ: Ո՛վ ամենակարող, որ միակ անմեղն ես, սրանցով մաքրի՛ր ինձ իմ բոլոր մեռելոտի գործերից: Տե՛ր, ամրացրո՛ւ իմ կյանքն ամեն տեսակի փորձությունից և իմ դեմ պատերազմողին քանիցս, որ վեր կենա իմ դեմ ամաչած, և պատկառած հետ մղիր ինձնից: Ամրացրո՛ւ իմ լեզվի և մտքի ընթացքը և մարմնի բոլոր ճանապարհները: Ամեն օր ինձ հետ եղի՛ր՝ Քո անսուտ խոստման համաձայն, թե. «Ով ուտում է Իմ մարմինը և ըմպում է Իմ արյունը, նա կբնակվի Իմ մեջ, և ես՝ նրա մեջ....»:

Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ

Իսահակ վրդ. Պողոսյան. **Պատումներ**

Ճշմարտության ձայնը

Մի հեռավոր երկրում, որի գտնվելու վայրը ոչ ոք չգիտեր, որտեղ արևը դուրս էր գալիս միայն բռնապետի թույլտվությամբ, իսկ մարդիկ ապրում էին համատարած լռության մեջ, երկաթե ձեռքով կառավարում էր Վարազ թագավորը՝ արգելելով ամեն տեսակ քննադատություն ու ճշմարիտ խոսք:

— Եթե մի բան ինձ դուր չի գալիս, ուրեմն այն ճշմարիտ չէ,— ասում էր նա:

Թագավորի պալատում ծառայում էր մի հնազանդ, տարիքավոր գրագիր՝ Անհուշ անունով, որը գրի էր առնում միայն այն, ինչ Վարազը ցանկանում էր:

— Գրիր, որ միայն ես գիտեմ ճշմարտությունը: Գրիր, որ ես արդարադատ ու ողորմած եմ,— հաճախ հրամայում էր բռնապետը:

Մի օր պալատում էր գտնվում հայտնի մի իմաստուն, քանի որ Վարազը ցանկացել էր լսել նրան:

— Ասա՛ ինձ, ի՞նչ է ճշմարտությունը:

Իմաստունը մի պահ լռեց, ապա պատասխանեց.

— Ճշմարտությունն այն է, որը ո՛չ խորշում է թագավորներից, ո՛չ զարմանում ու զարհուրում է պալատներից և ո՛չ էլ երկյուղում մահից: Այն շարունակում է ապրել, անգամ, երբ բոլորն անտարբեր են:

Այս խոսքերից Վարազի ժպիտը դեմքին սառեց:

— Իսկ ի՞նչ ճշմարտություն ես դու տեսել, որ ինձ անհայտ է:

Իմաստունը, անվախորեն նրա աչքերին նայելով, ասաց.

— Ճշմարտությունն այն է, որ քո սուրը վաղուց ի վեր արդեն հարգանք չի սփռում, այլ սոսկ վախ ու ավեր: Քո երկրում համատարած լռություն ու մթություն է: Եվ դու կհիշվես որպես լռեցնող, քան կառուցող կամ ապրեցնող:

Բարկությունը ցայտեց Վարազի աչքերից:

— Այստեղ՝ իմ պալատում, դու համարձակվում ես ինձ հետ այսպես խոսե՞լ:

— Ճշմարտությունն ամենուր իր խոսքն ու տեղն ունի՝ անգամ քո պալատում: Չէ՞ որ ինքդ ցանկացար ինձ լսել,— հանդարտությամբ վրա բերեց իմաստունը:

Բռնապետը բարկանալով՝ հրամայեց բանտարկել նրան: Բայց գրագիրը, որ տարիներ շարունակ թմբկահարել էր բռնապետի փառքը, գրի առնելով եղելությունը, գիշերով գաղտնի բաժանեց այն քաղաքի բնակիչներին: Եվ մարդիկ, աստիճանաբար հաղթահարելով իրենց վախերը, սկսեցին տարածել այն:

Տգետ թագավորն ու իմաստունը

Հեռավոր երկրներից մեկում մի չափազանց հպարտ թագավոր էր ապրում: Նա շարունակ արհամարհում էր իմաստուններին ու կարծում էր, թե գիտելիքը միայն թույլերին ու թշվառներին է անհրաժեշտ:

Մի օր, երբ նրա պալատ է գալիս իմաստուն մի ծերունի, թագավորը նրան ասում է.

— Ասա՛ ինձ, իմաստո՛ւն, ինչո՞ւ պիտի ես՝ ամենազոր թագավորս, ուսանեմ, երբ իմ կամքն արդեն իսկ օրենք է: Ես հնազանդություն եմ փնտրում, ոչ թե խորհուրդ:

Իմաստունը ժպտալով պատասխանում է.

— Ո՛վ մեծարելի, պատկերացրու, որ դու հայտնվել ես մեծ վիհում, պարան ունես, բայց չգիտես՝ ինչպես օգտագործել: Քո իշխանությունը կարո՞ղ է ասել՝ Բարձրացրե՛ք ինձ:

Բարկացած թագավորը հրամայում է արտաքսել իմաստունին:

Տարիներ անց թագավորի որոշումների պատճառով երկիրը կորցնում է իր անկախությունը, և երբ թշնամիները ներխուժում են, թագավորն ստիպված է լինում փախուստի դիմել: Երկար դեգերելուց հետո քաղցած ու հոգնած՝ նա հանդիպում է մի ծեր մարդու, որը նրան հաց է տալիս:

Երբ թագավորը հարցնում է՝ Ո՞վ ես դու, ծերը պատասխանում է.

— Ես այն իմաստունն եմ, որին դու արտաքսեցիր քո պալատից՝ չհասկանալով, որ հպարտությունով զուգորդված տգիտությունը կործանարար է, իսկ գիտելիքը՝ մշտավառ լույս՝ խավարում մոլորվածին:

Անպատրաստ թագավորը

Մի անգամ հեռավոր երկրներից մեկի ժողովուրդը որոշեց թագավոր ընտրել ժողովրդի միջից:

— Իշխանավորները մեզ շարունակ կեղեքում են ու զանազան նեղություններ պատճառում,— ասաց ժողովուրդը,— եկեք մեր միջից մեկին ընտրենք, որը հոգ կտանի մեզ և բարի, իմաստուն ու լավ թագավոր կլինի:

Եվ ընտրեցին մի համեստ ու ազնվասիրտ գյուղացու: Նոր թագավորը, գահին նստելով, կրճատեց հարկերն ու նեղությունները, բայց շուտով պարզ դարձավ, որ ամեն ինչ խառնվել է: Հարկերը չէին հավաքվել, բանակը քայքայվել էր, իսկ հարևան թագավորությունները աչք էին դրել իրենց տարածքների վրա: Թագավորը չգիտեր՝ ում լսել կամ ինչպես գործել: Ամեն քայլը սխալ էր դուրս գալիս, ամեն խոսքը՝ անտեղի:

Վերջապես մի ծեր խորհրդական, դիմելով նրան, ասաց.

— Գահը միայն պատիվ չէ, այլև պատասխանատվություն: Ով չունի նավ վարելու գիտելիք, նա նավապետ չի դառնա, և ով տակավին չգիտե թագավորել, գահը կխորտակի:

Թագավորն ամաչելով՝ հրաժարվեց գահից, վերադարձավ իր հայրենի գյուղն ու սկսեց ուսանել:

Երբ բավական ժամանակ անցավ, պարզ դարձավ, որ նա արդեն պատրաստ է ղեկավարելու, բայց ժողովուրդն այլևս նրան չապավինեց:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 4.11.2025 թ.
Տպաքանակը՝ 1265